

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ

## ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ

Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ Խրիմեան Հայրիկ՝ իր սնորհնութիւններովը գործնականապէս ընդունեց ժամանակին պահանջմանը համեմատ եկեղեցական օրէնքները բարեփոխելու սկզբունքը։ Ամուսնալուծութեանց և կրկնամուսնութեանց համար յաճախակի թողալուութիւնները բարձրաձայն կը հռչակեն ապահարզանի օրէնսդրութեան մը հարկը։ Հայրապետը նաեւ ընդլայնեց ազգակցական ամուսնութեանց շրջանակը։ Վերջի ատեններս Ռուսիոյ Հայոց կրօնական ատենաներուն հաղորդուած պատուէր մը կը յանձնարարէ ազգակցական հինգերորդ աստիճանի պսակադրութիւնները այսուհետեւ ուղղակի ընել, առանց էջմիածին դիմելու։

Կրօնական բարեշրջումի թուականի մը այս սկզբնաւորութիւնը իրեն արժանաւոր ուշադրութիւնը տակաւին չըրաւեց։ Ազգին միտքը Հայաստանի բարենորոգմանց խնդրովը դրազած է. ներքին բարենորոգութեանց հողածութիւնը մեզի շատ չի տառապեցներ։ Բայց ժամանակ է որ մեր տեսութեանց հորիզոնը աւելի տարածենք։ Ազգի մը վերածնութիւնը միակ պայման է մը կախում չունի. բազմաթիւ սատարներ իրարու միանալով կը վերակենդանացնեն ժողովուրդ մը։

Հայաստանի բարեկարգութիւններու խնդրին լուծմանը ճիշդ ու ճիշդ թուական մը որոշել կարելի չէ։ Քաղաքական հանգամանքները թերեւս մէկէն ի մէկ Արեւելքի կացութիւնը յեղաշրջեն. մեծ պետութիւնները գուցէ աւելի կամ նուազ երկար ատենի մը համար ո՛ր եւ կարգազարդութիւն յետաձգեն. Թիւրքիան աստիճանաբար բարեկարգելու խորհուրդը կրնայ յաղթանակել, որոշեալ նահանգներու մէջ բարեկարգութիւններու գործադրութեան սկզբնաւորութեամբ։ Այս ամէն ենթադրութիւնները հաւանականութեան շրջանակին մէջ են. միակ ստուգութիւնը այն է թէ Արեւելեան խնդիրը միշտ բաց կը մնայ, եւ հիմնական բարեկարգութեանց հարկը անխուսափելի է։ Բայց Հայ ազգին համար ալ ինքնապատրաստութեան հարկը

անխուսափելի պարտականութիւն է։ Առանց սպասելու որ հայկական խնդիրը լուծուի, մենք ամէն օր մենք մեզի զարգացնելու ենք, կարելիութեան սահմաններուն մէջ, եթէ կ'ուզենք ապագայ մը ունենալ։ Նոր սերունդներ 1878էն ի վեր իրարու յաջորդեցին, առանց հայկական խնդրին կարգադրութեանը սպասելու. 1894ին 12-15 տարեկան եղող սղաքը այժմ երիտասարդութեան կը մօտենան. ու աչքերնիս զոցենք բանանք, հիմակուան պղտիկները մեծցած պիտի գտնենք, Հայոց ազգին վիճակը բարեփոխուած ըլլայ թէ ոչ, Վաղուան ազգը ատոնք են. ու երբ մէկ կողմէն հայկական դատին յաջողութեանը կ'աշխատինք, միւս կողմէն պէտք է փութանք մեր ընդհանուր զարգացման գործը հզօրապէս յառաջ մղելու, մենք մեզի բարեկարգելով։

Իրաւ է որ Հայ ազգին արդի վիճակը ինքնազարգացման նպատաւոր հող մը չէ. բայց եթէ Թիւրքիոյ մէջ վայելէինք բարոյապէս եւ նիւթապէս բարգաւաճելու պայմանները, հայկական խնդիրն ալ չէր ծներ։ Հողը որքան աւելի կարծր է մենք ալ այնքան աւելի ուժգնապէս աշխատելու պարտական ենք, որպէս զի լաւագոյն օրերու պատրաստուինք։ Հայաստան այսօր ամենատառապեալ կացութեան մէջ է. Հայ ժողովուրդը կը կողոպտուի, կը թալլուի, կ'այրի, կը ջարդուի իր պատմութեան մէջ նմանը չտեսնուած վայրագութեամբ. եւ սակայն Հայ ժողովուրդը առանց սպասելու բարեկարգութեանց հարցին լուծմանը, նորէն կը ցանէ, նորէն կը հնձէ, նորէն տունը տեղը կը շինէ, նորէն կը կարգուի, նորէն զաւակ կ'ունենայ. Հորէն ու թուրէն ինչ որ կրնայ փրկել, զայն կ'ազատէ։ Այդ աննկուն յամառութեամբն է որ Հայ ազգը իր երկրին մէջ կ'ապրի. եւ ապագայ ունենալու համար նախ պէտք է ապրի։

Ժողովրդի մը նիւթական կեանքը սակայն կրնայ երկարաձգիլ, մինչեւ իսկ անհուն ժամանակի մը համար, առանց հիմնական բարեփոխութեանց ենթակուելու, ինչպէս Եգիպտոսի Ֆէլլահները կ'ապրին անյիշատակ ժամանակներէ ի վեր. բայց բարոյական կեանքը յառաջդիմութեամբ միայն կրնայ շարունակուիլ. ու եթէ մենք բարոյական կեանք մը չունենայինք, Հայութիւնը նշանակութիւն չէր ունենար, եւ ոչ ալ գոյութեան պատճառ մը կամ իրաւունք մը։

Այս տեսութիւններովն է որ կրօնական օրէնքներու բարեփոխութեան համար կաթողիկոսական նախաձեռնութիւնը մեծ կարեւորութիւն կը ստանայ, մասն զի մաքի ուղղութեան յայտարար նշանն է, եւ յառաջդիմական գաղափարներու յաղթանակ մը կը հաստատէ: Այդ յաղթանակը այնքան աւելի գոհունակութիւն կը պատճառէ որքան աւելի սաստկավէճ եղաւ մղուած կոիւր Հայոց թէ՛ եկեղեցականներու եւ թէ՛ աշխարհականներու մաքին մէջ քանի մը ամենատարրական ճշմարտութիւններ մտցնելու համար: Ու այնքան մարտնչումներէ յետոյ տակաւին չենք կարող ապահովապէս ըսել թէ՛ ազգին ստուար մեծամասնութիւնը կատարելապէս համոզուած է որ եկեղեցական ինչ ինչ օրէնքներ բարեփոխելու անհրաժեշտ հարկ կայ: Ահա Էջմիածնի Սինոդը հայրապետական տրնօրինութիւնները յարգելու դժկամակութիւն ցոյց կուտայ, որով ուսական կառավարութեան միջամտութիւնը երեւան կուզայ զուտ կրօնական խնդիրներու համար ալ:

Կովկաս՝ Մշակ, Պոլիս՝ Հայրենիք ջերմօրէն պաշտպանեցին Հայոց ամուսնական հին օրէնքները բարեփոխելու գաղափարը: Այս երկու թերթերուն դէմ ահազին թշնամութիւն յայտնուեցաւ: Մշակը անկըքն, անաստուած, ազգ ու եկեղեցի քանդող ամբաստանուեցաւ իր հակառակորդներէն. Պոլիս մինչեւ իսկ պատերազարանէն քաղցիք գրուեցաւ Գուռը ամուսնական խնդիրներու վերաբերեալ յօդուածներու հրատարակութիւնը Հայրենիքին արգելելու համար: Սակայն գիտական ճշմարտութեան վրայ հիմնուած գաղափար մը պէտք է որ յաղթանակէ: Գաղափարը որքան աւելի կը ծեծուի այնքան աւելի խորը կը մխի մտքերու մէջ, զլիւնն զարնուած գամի մը պէս: Իր ժողովուրդը մօտէն ճանչցող, զայն սրտանց սիրող եկեղեցական մը որ անոր շատ մը ցաւերուն դարմանին աշխատած է միշտ, չէր կրնար անտարբեր մնալ այն բոլոր վշտերուն զոր կոյր աւանդապահութիւնը կը պատճառէ հայ ազգին:

Եկեղեցական վարչութեամբ կառավարուող ժողովուրդներուն համար կրօնքը երկու կողմէ՛ր ունի, աստուածային ճշմարտութիւն մը քարոզել անոնց, եւ տնօրինել ընթացիկ կեանքերին: Ինչ որ կը վերաբերի հաւատքի, ատոր մասին ո՛ր եւ է խնդիր չի կայ: Իւրաքանչիւր հայ իր մտքին կազմութեանը համեմատ կրնայ խորհիլ. ո՛ր եւ է մտածութիւն, ի՛նչ ալ ըլլայ, չի կրնար բռնազօսիկ ազդեցութիւն ունենալ իր կեանքին վրայ: Բայց երբ յանուն հաւատքի անհատներու ընթացիկ կեանքը կը վճռուի, այն ատեն յառաջդիմութեան գաղափարը կը ներկայանայ: Նախնիք իրենց ժամանակին պէտքերուն համեմատ օրէնքներ սահմանած են անհատական եւ ընկերական կեանքը կառավարելու համար: Կրնանք ընդունիլ թէ՛ այդ օրէնքները իրենց ատենին սքանչելապէս յարմարած ըլլան, բայց այդ թուականէն հազար տարի ետքը ապրող Հայերը ո՛ր եւ է պարտականութիւն շունին մեռելներուն կաշկանդուած մնալու: Նոր ըմբռնումներ կան, նոր պէտքեր կան: Հայոց կաթողիկոսը այս ճշմարտութիւնը

շատ լաւ հասկցած է: Եկեղեցականներէ ոմանք կաթողիկոսին երբ դիտողութիւններ ներկայացուցեր են իր ամուսնական տնօրինութեանցը առթիւ, առարկեր են թէ՛ «Հայրապետները այսպէս որոշած են, այնպէս որոշած են»: Կաթողիկոսը ամէնուն խօսքը կտրեր է ըսելով. «Ես հայրապետ չե՛մ»: Այո՛, ոչ ոք ուզած է այս պարզ մտածութիւնը ունենալ: Ինչո՞ւ համար հազար տարի առաջուան կաթողիկոս մը պիտի կրնայ եկեղեցական մեծ հեղինակութիւն համարուիլ, իր պաշտօնին շնորհիւր, ու հիմակ միեւնոյն պաշտօնը ունեցող եկեղեցական մը այդ իրաւունքէն զրկուած պէտք է մնայ: Ամբողջ հայ ժողովուրդէն, նոյն իսկ այն Հայերէն որոնք ուղղակի Լուսաւորչի աթոռին իրաւասութեան տակ չեն, սիրուած, յարգուած, պաշտուած Հայրիկը ինչո՞ւ իբրեւ Ենորհալի մը չներկայանայ իր Եկեղեցիին մէջ:

Կարելի չէ որոշապէս դիտնալ թէ՛ Հայոց մեծ-ծերունիին ազատամտութիւնը մինչեւ ուր պիտի յառաջանայ. բայց հայրապետը մինչեւ հիմա ինչ որ տնօրինեց կը գահացնէ ամէն անոնք որ ազգի մը պահպանութիւնը յառաջդիմութեան մէջ կը տեսնեն: Միւս կողմէ՛ մօտնալու չենք թէ՛ ձեռք բերուած առաւելութիւնները որքան որ ալ գաղափարի մը յաղթանակը կ'ապացուցանեն, սակայն տակաւին հաստատուն հիմերու վրայ չեն հանգչիր: Յաջորդ կաթողիկոս մը կարող է իր նախորդին վճիռները իբր նախընթաց մը համարելով միեւնոյն մտածութեամբ տալ իր որոշումները, բայց ազատ է նաեւ հին աւանդութեանց տառին կառչած մնալ: Նոյն իսկ հիմա ամուսնալուծութեան եւ կրկնամուսնութեան ամէն մէկ պարագայի համար միշտ հարկ է կաթողիկոսական հրամանին գիմել: Ինչ որ պէտք է պահանջել, ճշգրիտ օրէնսդրութիւն մըն է, որուն շնորհիւ հայ անհատներու կեանքին պայմանները կախում չունենան կաթողիկոսի մը մտածելու եւ զգալու եղանակէն:

Եկեղեցական ընդհանուր ժողով մը կարող է այդ օրէնսդրութիւնը հաստատել, բայց թիւրքիոյ Հայոց արդի կացութիւնը նկատողութեան առնելով կարելի չէ մտաբերել այդպիսի ժողովի մը գումարման հնարաւորութիւնը: Բայց եթէ հնարաւոր իսկ ըլլա՞ր: Չենք կրնար կարծել թէ՛ այդ ժողովին մեծամասնութիւնը, թէ՛ եկեղեցականները եւ թէ՛ աշխարհականները, յառաջդիմական մաքով օժտուած ըլլայ: Աւանդամուտութիւնը տակաւին կը տիրապետէ մտքերու ստուար թիւի մը վրայ:

Հայ եկեղեցականներուն մէջ Հայրիկին գաղափարակից մէկ եպիսկոպոս մը ակներեւ տեսնուած է մինչեւ հիմա՝ Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսը: Մեր արդի հանրային կեանքին դժբաղդութիւններէն մէկն է այն զրմտութիւնը զոր կովկասի յետադիմական կարգ մը շահամոռներ յաջողեցան յարուցանել կաթողիկոսին եւ Սեդրակեան եպիսկոպոսին միջեւ: Թիֆլիսի նախորդ առաջնորդը Խրիմեան Հայրիկը սրտանց սիրող ու մեծապէս յարգող եպիսկոպոս մը եղած էր: Առանց այդ մեքենայութեանց կաթողիկոսն ու Սեդրակեան եպիսկոպոսս իրարու

Հետ փոխադարձ մեծարանքով ու սիրով կապուած կը մնային, եւ յառաջդիմական գաղափարները աւելի զօրութիւն պիտի ստանային: Բայց ինչ որ եղած է եղած է: Սեղրակեան եպիսկոպոսը դեռ երիտասարդ է, և ութսունամեկն ծերունիէ մը աւելի երկարակեաց ըլլալուն հաւանա- կանութիւնը ներքի է մաքէ անցընել: Կաթողիկոսութեան առաջնակարգ ընտրելին է. ու եթէ ինք բազմի Լուսաւոր- չին գահը անտարակոյս Հայոց Եկեղեցիին համար նորա- նոր բարենորոգումներ պէտք է յուսացուին:

Սակայն յառաջդիմականները փոխանակ անհատնե- րու վրայ յոյս դնելու պէտք է գաղափարներու ընդհանրա- ցումէն սպասեն մեծ յաջողութիւնը: Անհատը այսօր կայ վաղը չի կայ. եթէ գաղափարի մը ներկայացուցիչը ինքն է միայն, այդ գաղափարն ալ իրեն հետ կ'անցնի կ'երթայ: Հայրիկին կաթողիկոսական որոշումները վերջնական յաղթանակ համարելու չէ, եւ ոչ ալ ուրիշ եպիսկոպոսնե- րու վրայ յոյս դնելով սպասելու է: Ազատական օրէնքներու պահանջուը անդիմադրելի պէտք է ըլլայ ազգին մէջ, այն ատենն է միայն որ վստահօրէն կարելի է դրական արդիւնքներու սպասել: Յառաջդիմականներու պարտա- կանութիւնն է անզու անզաղար շարունակել գաղափարի տարածումը: Օրագրական յօդուածներ, վէպ, իմաստա- սիրական տեսութիւններ ազգին ամէն խւերուն մէջ օ- րէնսդրական բարենորոգումներու պէտքը զգացնել տա- լու են:

### ՖՐԱՆՍԱ ԱՐԵՒԵԼԲԻ ՄԷՋ

«Ռըվիշ տե Տեօ—Մոնտ»ի սեպտեմբեր 15 ի քիշիկ մէջ Պ. Էդիէէ Լամի կը հրատարակէ Ֆրանսայի արեւելե- ան քաղաքակաւոնութեան նշխարած հոշակապ յօդուածնե- րուն վերջին մասը: Հաշտարիմ մեր ուղղութեանը որ միեւնէ հիմա մեզի մղեց արեւելեան խնդրին վրայ հրա- տարակոչած շառագոյն ուսումնասիրութիւնները ներկա- յացնել այս կէտրուն մէջ՝ ամբողջական գաղափար մը տա- յու համար մեր ընթերցողներուն Արեւելքի շարքը յոռո- յոռո շաներուն եւ ցանկոտքիւններուն մասին, այսօրուներէ կը սկսիք բարգմանել այդ յօդուածը:

### Ա

Ֆրանսայի եւ Թիւրքիոյ քաղաքական համաձայնու- թիւնը, Ֆրանսոսա Ա Էն մինչեւ Յեղափոխութիւնը, վե- հապետէ վեհասպետ նիզակակցութիւն մը եղած է եւ ոչ թէ ժողովուրդէ ժողովուրդ բարեկամութիւն մը: Մահմետա- կան եւ կաթոլիկ, երկու քաղաքակրթութիւնները շատ բնական էին իրարու որպէս զի կարենային իրարու խառ-

նուիլ եւ իրար հասկնալ, եւ Ֆրանսացիները նոյնքան օ- տար կը զգային նաեւ իրենց զիրենց այն քրիստոնեայ ցեղերուն համար որոնք՝ օսմանեան լուծին ներքեւ՝ ան- կախութեան յիշատակն իսկ պահած ըլլալ չէին թուեր:

Այդ յիշատակը անոնց մէջ արթնացաւ ֆրանսական Յեղափոխութեան ձայնէն: Այդ թուականէն սկսեալ, մեր Թիւրքիոյ մատուցած ծառայութիւնները թոյլ տուին մեզի իր քրիստոնեայ հպատակներուն համար լաւագոյն վիճակ մը եւ աճեցուն ինքնօրինութիւն մը ձեռք բերել: Այս գերը յաջողեցաւ եւ տեւեց որչափ ատեն որ իսլամը գիշաւ Արեւմուտքէն բարենորոգումներ փոխ առնելու, որչափ ա- տեն որ մեր վայելած ազգեցութիւնը կշիռ տուաւ մեր խը- րատներուն, որչափ ատեն որ պարտեալները թիշով շատա- ցան:

Բայց իրաւունքին դիտակցութիւնը որչափ աւելի կ'ա- ւելնար, այդ ցեղերուն հլութիւնն ալ այնչափ աւելի կը պակսէր: Թիւրքը, որ իր ցոյց տուած հնազանդութեանը վարձքը առաւ՝ հետզհետէ իր երկիրները կորսնցնելով, ըմբռնեց խաբէութիւնը անուշ ընթացքի մը որ իր ձեռքերը կը կապկպէր և իր գերիներուն շղթաները կը քակէր: Մեր հաշտարար դերը 1870ին վերջացաւ մեր գերակառու- թեանը հետ: Անկից ի վեր, իրենց ինքնօրինութիւնը ձեռք բերել ուզող ցեղերուն կամքը եւ իր աշխարհակալած եր- կիրները պահել ուզող յաղթականին կամքը իրարու բաղ- խեցան: Մովթանը ուժին վրայ դրաւ իր ամբողջ հաւատ- քը, ու արեան հօտը զինքը վերադարձուց ժառանգական վայրագութեանը. փոխանակ զեղծումները սնչացնելու, դանդաւորները կ'սնչացնէ. կը սպաննէ, ապրելու հա- մար: Եւ մահուան սպանալիքին ենթակայ ազգերը յոյս մը կը սնուցանեն աւելի ուժեղ քան վախը. գիտեն թէ նոյն իսկ յաջող պատերազմէ մը ետքը, Թիւրքը իր ստացուած- քէն մաս մը կը կորսնցնէ. զանի դատապարտուած կը նը- կատեն, որովհետեւ յաղթութիւնը այնքան ազիտարեր է անոր որքան պարտութիւնը. ա'լ անոր արդարութեանը չեն սպասեր, հապա անոր վախճանին: Այս հակառակորդ- ներուն միջեւ, ա'լ չլարմանուելիք բան մը կայ, եւ կոխը պիտի չհանգարտի, մինչեւ որ այդ ազգայնութիւնները կա'մ սնչանան, կա'մ յաղթանակեն:

Այս փոփոխութիւնները նոր բնաշրջում մը պարտք կը դնեն մեր քաղաքականութեանը վրայ: Ա'լ ժամանակը անցած է վերստին ձեռք առնելու այն իրաւասիւհութիւն- ները որոնք Թիւրքին և հպատակ ցեղերուն միջեւ խառ- նուածքի անհաշտելիութիւնը կը քնացնէին: Անոնց վեճին անտարբեր մնալը ամէնէն ձախող ընթացքը պիտի ըլլար, որովհետեւ մարդու պէտք չունեցողներն են միայն որ ո'չ մէկուն օգտակար չըլլալու արդարացումը կրնան ունենալ: Թիւրքին եւ քրիստոնեայ ցեղերուն միջեւ, ժամը հասած է ընտրութիւն ընելու:

Թիւրքին կողմը բռնելը՝ ուրանալ պիտի ըլլար այն սկզբունքները որոնք անցեալին մէջ մեր պատիւը եղած են. ժողովուրդներուն արեանը մէջ մարել պիտի ըլլար այն ջահը որով անոնց աղջամուղջքը կը լուսաւորէինք: Այդ-

պիտի անարգ գործ մը վարձատրելու համար, շատ առաւելութիւններ պէտք պիտի ըլլային. ու այդպիսի առաւելութիւններ յուսալու չենք սուլթանէն: Անշուշտ անիկա գիտէ գնահատել բարեկամութիւն մը որ իրեն թոյլ տայ անվախ առաջ տանիլ իր անգթութիւնները: Բայց այդ բարեկամութիւնը գտած է: Ապագայ նախճիրներուն մէջ՝ ստորագրաս դերեր ու շահեր միայն կը մնան ձեռք բերելիք. Ֆրանսա չի կրնար շատանալ դահիճի սպասաւորի դերով: Հետեւաբար ամէն բան զինքը կը մղէ դէպի ժողովուրդները, եւ փնտռելու թէ ի՞նչպէս կրնայ օգտակար ըլլալ անոնց՝ առանց ինքզինքին փասելու:

Փրկութեան առջեւ առաջին խոչընդոտը յարուցանողները նոյն իսկ զայն խնդրող ցեղերն են: Այդ ցեղերը բազմաթիւ են, եւ անոնցմէ երեքը ո՛չ միայն ազատագրութեան կը ցանկան, հապա նաեւ գերակշռութեան: Յոյները, որոնք Պետութեան և Եկեղեցիին տէրն էին Բիւզանդիոնի օրով, տակաւին ներկայ են իրենց գաղութներով մեծ քաղաքներուն մէջ, կը տիրապետեն Արեւելի նաւահանգիստներուն մէջ. եւ իրենց փառասիրութիւնը ամբողջ կայսրութեան վրայ կը տարածուի: Հնութեան, դրամի եւ իմացականութեան առաւելութեամբ, իրենք զիրենք գերազանց կը նկատեն միւս ցեղերէն: Բայց այդ ցեղերուն մէջ որոնք, թիւրքին կամ Յոյնն անբեւ, իբր թէ պարտաւոր են միշտ հնազանգելու, Սերպերն ու Պուլկարները կան: Սերպերը, աւանդութեան դէմ աւանդութիւն հանելով, կը յիշեն թէ, ԺԴ դարուն իսկ, իրենց Մեծն Տուշան կայսրը Բիւզանդիոնի վեհապետներէն խլած էր զրեթէ անոնց բոլոր եւրոպական նահանգները. եւ սերպ զիւցազնին շառաւիղները անոր ժառանգութենէն ստացած են իր տիրապետութիւնը Պալքաններուն վրայ: Պուլկարները Սերպերէն աւելի հին իրաւունքներ գտած են Պալքանեան թերակղզիին տէրը ըլլալու համար. այն երկիրները զորոնք Տուշան ԺԴ դարուն գրաւած էր, Յորդ դարուն արդէն Սիմէոն կայսեր պուլկար մականին տակ իմբուած էին: Այդ կայսրն էր որ առաջին անգամ խորհուրդը յղացած էր յունական գերակշռութիւնը խորտակելու եւ կայսրութիւնը յանձնելու այն ցեղին որ իր կողմը ունէր թէ՛ շատութիւնը և թէ՛ արութիւնը. ու Պուլկարները կ'ըսեն թէ՛ ո՛չ արութիւննին կորսնցուցած են, ո՛չ շատութիւննին:

Ըստ որում այս երեք ցեղերէն իւրաքանչիւրը արդէն անկախ է երկիրներու մէջ որոնք անժխտելի կերպով իրենցն են ալ, վէճը այդտեղ զարգած է՝ կատարուած իրողութեան ուժովը: Բայց մըցումը իր բոլոր ուժը կեդրոնացուցած է այն երկիրներուն մէջ որոնք օսմանեան տիրապետութեան տակ մնացած են եւ զորոնք իւրաքանչիւրը առաջուրէն իրենք կը համարի: Արդ, այդ երկիրները — Թեսալիա, Ալպանիա, Հին-Սերպիա, Մակեդոնիա, Թրակիա — այն յառաջապահներն են ուր ցեղերը իրենց սահմանազուլանները ունին, հետեւաբար քով քովի իրարու կը դուլին: Արդէն, խնդիր է գիտնալը թէ Յունաստանի, Սերպիոյ եւ Պուլկարիոյ միջեւ տարածուող ընդարձակ եր-

կիրը մաս առ մաս իր դրացիներուն կը վերաբերի, թէ ոչ ամբողջութեամբը ինք իրեն. թերեւս, Աղեքսանդր եւ Մակեդոնացիները աշխարհի մէջ այնչափ ճամբայ առած եւ այնչափ ազմուկ հանած են որ անոնց սերունդը այսօր իրաւունք ունենայ ինքզինքը ուրոյն ժողովուրդ մը նկատելու: Այս գլխաւոր ցեղերուն ուրիշներ միացած են: Մայր փեթակէն թռած բաժնուած մեղուներու պէս, գացած այդտեղ իջած են. ալպանիացի ցեղեր իրենց լեռները թողած ու Հին-Սերպիոյ լեռները գացած են. վալաք հովիւներ իրենց հօտերը կ'արածեն Պինդոսի առկիւններուն վրայ: Վերջապէս, այդ երկիրներէն ոմանց մէջ, ցեղերը անջատ անջատ քովքովի չեն, հապտ խառնուած եւ իրարու շփութած, այնպէս որ եթէ անոնցմէ մէկուն վեհապետութիւն տրուէր՝ միւսներուն ինքնօրինութիւնը պիտի յափշտակէր:

Իրենցինէն գատ ուրիշ ցեղի մը վերագրուելու վախը՝ զեռ թիւրքին հպատակ ժողովուրդներուն անկախութեան շարժումները կը ջլատէ: Արդէն ազատած պետութիւնները Հիւանդ մարդուն կը թողուն այդ ըղձացուած նահանգները, վախնալով որ մի գուցէ ուժեղ ժառանգակիցներու ձեռքը իյնան, եւ նախամեծար կը համարին սպասել քան կորսնցնել: Սուլթանը ոյժ կուտայ այդ նախանձութիւններուն: Ասոնք ոչ միայն իր դատին կը ծառայեն, հապա երկու օտար պետութեանց՝ Ռուսիոյ եւ Աւստրիոյ թոյլ տուած են իրենց սեփական շահերուն ստորագրասել Պալքանեան ժողովուրդներուն ճակատագիրը:

Ռուսիա՝ Պալքաններուն մէջ իրարու դէմ ելլող փառասիրութիւններէն այլապէս աւելի ընդարձակ ծրագիր մը առաջ կը վարէ: Բիւզանդական կայսրութեան ամբողջ ժառանգութիւնը իբր մոսկովեան կայսրութեան մէկ մասը կը նկատէ, և կ'ուզէ որ բոլոր քրիստոնեայ ցեղերը, թիւրքին ձեռքէն ազատած ատեննին, իրեն համար աշխատած ըլլան: Կրօնքի նոյնութեամբ՝ Օրթոտոքսներուն միացած, և արեան նոյնութեամբ՝ Սլաւներուն կապուած, այդ ժողովուրդներուն վրայ մեծ ազդեցութիւն ունէր անոնց զարմնումին ատենը, և զանոնք համասլաւութեան շրջանակին մէջ պարուրեց, հակառակ իրենց վէճերուն: Իր փարթաւութեանը մէջ այդ աղքատ ազգականներէն երես չդարձը նելով, Ռուսիա անոնց երախտագիտութիւնը կը շահէր եւ այսպէս մուտ կը գործէր անոնց գործերուն մէջ. անոնց մանկութեանը հանդէպ մօր մը կերպարանքը առնելով, իրաւունք կը ստանար անհարկի ըլլալու աստիճան հոգածու ըլլալու անոնց մասին եւ զանոնք հլութեան վարժեցնելու. վերջապէս, համասլաւութեան անունին տակ՝ իրեն հետ զուգակից ապագայի մը հորիզոնը բանալով անոնց առջեւ, զանոնք իրենց պատիկութեանը մէջ կ'ընկճէր՝ իր մեծութեան հակապատկերովը, անոնց ձգտումներուն անհամաձայնութիւնները կը խառնէր կ'անհետացնէր իր զանգուածին միութեանը մէջ, անոնց աչքին անարժէք կը դարձնէր իրենց պատիկ իմբերուն ինքնօրինութիւնը, և փառք եւ ուժ կ'ընծայէր անոնց կայսրութեան համար ստեղծուած ազդի մը հետ համերաշխութեամբ: Այս հետեւանքները հասունցնելու համար, ժամանակ միայն պէտք էր: Եր-

բոր Պալքաններու ժողովուրդները իրենց հպարտութեան առաջին հուրքը թափելին, իրենց եռանդը մաշեցնելին իրարու դէմ, իրենց երազներէն և իրականութենէն տառապելին, իմաստութիւնը պիտի զար իրենց՝ յոգնութեան հետ, եւ իրենց պզտիկ հայրենիքներուն սկարութենէն հրաժարելով, ուրախ պիտի ըլլային մեծ հայրենիքին մէջ գտնելու ոյժ, միութիւն եւ հանգիստ: Մինչեւ այդ ատեն, Ռուսիա այնչափ միայն պիտի գործէր անոնց ի նպաստ որչափ պէտք է պաշտպանի մը կերպարանքը պահելու համար. պիտի ըստպասէր որ ժողովուրդները, ազատելու եւ իրենց զիրենք կառավարելու անկարող ըլլալուն համոզուած, իրմէն խնդրէին՝ իբր ծառայութիւն մը՝ օսմանեան լուծին տեղը ուսական գերիշխանութիւնը գնել:

Ռուսիա կարծեց թէ այդ ժամը հասած էր 1877ին: Քրիստոնեաներուն դէմ գործուած խժոժութիւնները զինքը կը հարկադրէին կա՛մ լքել իր յաճախորդները, կա՛մ զինու զօրութեամբ պաշտպանել զանոնք: Պատերազմեցաւ, եւ Սան-Սթեֆանոյի մէջ հաշտութեան պայմանները տուն տուաւ: Պուլկարիա անունին տակ, նորՊետութիւն մը կազմուեցաւ, որ, մինչև այդ ատեն ի փաս թիւրքիոյ հիմնուած ամէն երկիրներէն աւելի ընդարձակ, Դանուբէն մինչև Սեծով և Եդէական ծով կը տարածուէր, բերրի հող մը ունէր, ժիր ժողովուրդ մը, և լաւ սահմանազուտներ: Իր զիրքովը, թիւրքիոյ առջև կը փակէր այն նահանգներուն ճամբան որոնք տակաւին օսմանեան իշխանութեան տակ կը մնային Եւրոպայի մէջ, Կ. Պոլսոյ ճամբան կը փակէր Յունաստանի առջև, եւ ինքն իսկ այդ մայրաքաղաքին արուարձաններուն կը դպչէր: Իր զինուորական եւ անտեսական գերազանցութեամբը, Պալքաններուն միւս սլաւ երկիրներուն հակառակութիւնը կը չէզոքացնէր: Իրեն եւ Մոնղէնէկրոյի միջև, որ թերակղզիին միւս ծայրը՝ ուսական ազդեցութեան յառաջապահ էր, հարաւի Սլաւները պիտի միանային, պարփակուէին, կազմակերպուէին: Պոսնիան, Հէրսէքը, Հին-Սերպիան, իրենց անուանական տերերուն՝ թիւրքերուն՝ հետ ու եւ է շոշափումէ աղատած, եւ եղբայր ժողովուրդներով շրջապատուած, սերպ ազգայնութիւնը ամբողջացնելու սահմանուած էին: Եւ արքանեակ Պետութիւններու անընդհատ շարունակութիւն մը մինչև Ալբերիական պիտի տարածէր Ռուսիոյ գերիշխանութիւնը:

Այս յատակագիծը Աւստրիոյ նոր ցանկութիւնները կը կործանէր: Աւստրիա, դարերէ ի վեր Իտալիոյ եւ Գերմանիոյ տիրապետելու զբաղած, 1866ին այդ երկու երկիրներէն ալ վնասուած էր: Այն ատեն խորհեցաւ որ իր մականին տակ հաւաքուած ցեղերուն պէսպիսութիւնը իրեն թող կուտար փոխել իր ազգային քաղաքականութիւնը. թէ, եթէ ատեւօք իր գերմանական պզտիկ զբոսութեան շուրջը խմբած էր ամբողջ գերման կայսրութիւնը, ապա գային իրեն աւելի զիրին պիտի ըլլար իր սլաւ զանգուածներուն յօդել համաձին ժողովուրդները որոնք Պալքանեան թերակղզիին մէջ ցրուած էին, եւ զոհն էին թիւրք բարբարոսութեան: Անմիջապէս կանակ դարձուց իր կրկնիծներուն, եւ իր յոյսերուն նայեցաւ: Առաջին քայլը առ-

նելէ առաջ, ճամբան իրեն առջև փակուած էր եթէ Սլաւան եւ Դանուբը սահմանագծերը մնային որոնց մէջ կաշկանդուած էր իր գործունէութիւնը, եւ որոնցմէ անդին կը սկսէր ուս ազդեցութիւնը: Վիեննայի յուսախաբութիւնը կրնար վտանգաւոր ըլլալ Պերլինի: Եթէ Աւստրիա իր փառասիրութեանը յագուրդ չգտնէր, կրնար վախցուիլ որ, իր պատմական ընթացքն ի վեր ելլելով, զար սպառնար Գերմանիոյ մէջ հաստատուած իրաց նոր վիճակին: Սան-Սթեֆանոյի դաշնագրին ստեղծած վտանգը մէջտեղէն վերցուեցաւ Պերլինի վեհաժողովին ձեռքով, որ Ռուսիոյ կատարած գործը սրբագրեց. ու սրբագրութիւններուն խստութենէն յայտնի եղաւ թէ Բրուսիոյ գործն էին աւտոնք: Պուլկարիան պզտիկ իշխանապետութեան մը վերածել եւ թերակղզիին միւս ժողովուրդներուն վրայ իր ուժին գերազանցութիւնը առնել իրմէ. Կ. Պոլսը թիւրքիոյ եւրոպական վերջին ստացուածքներէն բաժնող անկախ պետութիւններու անընդհատ զանգուածին տեղ, սահմանագիծերը այնպէս մը որոշել որ այդ պետութիւնները թիւրք հողին տարածութեանը մէջ պարփակուած անջատ մարմիններ կազմեն. Դրան ետ դարձնել Ռուսիոյ իրմէն խլածին մեծագոյն մասը, եւ ի փոխարէն Աւստրիոյ տալ Պոսնիան և Հէրսէքը. այդ գրաւումով, երկու նահանգները, որոնք, Սերպիոյ ձեռքը անցնելով, Մոնղէնէկրոն Սերպիոյ պիտի միացնէին, հիմակ ընդհակառակը իրարմէ կը բաժնէին այդ ժողովուրդները, եւ, Սավայէն անդին, ելք մը կը բանային Աւստրիոյ առջև, որ Գերմանիոյ յառաջապահն է. Մակեդոնիոյ մէջը թափանցել աւստրիական երկաթուղիով մը որ, մինչև ծովը հասնելով, ամէնէն կարճ հաղորդակցութիւնը հաստատէր Կեդրոնական Եւրոպայի եւ Եգիպտոսի միջև. ասով, ուղիղ գծով մը Համպուրից, Պերլինը, Վիեննան եւ Սէլանիկը Սուէզի միացնել. ամբողջ թերակղզիին մէջտեղէն այս գերմանական խոչընդոտը յարուցանել ազգայնութեանց կազմութեանը եւ Պետութիւններուն համաձայնութեանը դէմ. — ահա այս եղաւ համագերմանութեան պատասխանը համասլաւութեան:

Երկու յառաջխաղացութիւն միահաղոյն կը սկսէին, մին որ Սեծովէն կը մեկնէր՝ ուսական ազդեցութիւնը տանելու համար մինչև Ալբերիական, միւսը որ Դանուբէն կը մեկնէր՝ գերմանական գերակշռութիւնը տարածելու համար մինչև Եգէական ծով: Փառասիրութեան այս երկու դժերը իրարու պիտի հանդիպէին ուղիղ անկիւնով: Ո՛րը պիտի կտրէր միւսը:

Աւստրիա յոյս չէր կրնար գնել ժողովուրդներուն սիրոյն վրայ. անոնց շահերուն եւ անոնց հակառակութեանցը վրայ դրաւ յոյսը: Որովհետեւ կարելի չէր Մոնղէնէկրոն իր կողմը շահիլ, չորս կողմէն պաշարեց զայն. ուղիւ մագիտական ճամբաներ, ամբոցներ եւ ցամաքային ու ծովային ոստիկանութիւն մը հսկեցին անոր ուժին վրայ և թող չտուէին որ իր գաղափարները տարածէ իր սահմաններէն դուրս: Պոսնիոյ և Հէրսէքի մէջ, Աւստրիա 600,000 օրթոսոցներուն տժգոհութիւնը ամլութեան դատապար

տեղ՝ 300,000 կաթոլիկներուն և 300,000 մուսուլմաններուն տրուած շնորհներով: Սերպ թագաւորութիւնը, նորածին ու աղքատ պետութիւններէ ու Աւստրիայէն շրջապատուած, դէպի հարստութիւն ուրիշ ճամբայ չունէր բայց եթէ Աւստրիան. Սերպիոյ ապրուստի միակ աղբիւրը իր երկրագործական բերքերը ըլլալով, անոնց արտածութեան առջեւ Վիեննայի օժանդակութիւնը կամ արգելքը Սերպիոյ բարեկեցութիւնը կ'ապահովէր կամ զայն անօթութեան կը մատնէր: Սերպիա անհամբերութեամբ կը բաղձար ունենալ այն հանրագումար տարապայման շինութիւնները որոնք ժողովուրդներուն համար երիտասարդութեան խենդութիւններն են. Աւստրիա իրեն հայթայթեց ճարտարագէտներ, ճարտարագործներ եւ ելմտագէտներ, ինքզինքը անհրաժեշտ ընծայելու համար, զայն շահագործելով հանդերձ: Վերջապէս, Աւստրիոյ համար լաւագոյն բաղդը եղաւ սերպ վեհապետին նկարագրերը: Դիւրաթեք մտքով, սկեպտիկ սրտով, իր անհատական կեանքին եւ իր հարստութեանը տնտեսութեանը մէջ անկարգ ու անխղճահար, արքայական մարթի մէջ մուրրուած բաղդախնդիր մըն էր այդ վեհապետը: Կարծեց իր երկրին շահերուն — և ապահովապէս իր անձնական շահերուն — համաձայն գործել, Աւստրիոյ կապուելով: Աւստրիա անոր ցոյց տուաւ թէ Ռուսիա միշտ աւելի Մոնղոլներու իշխանին բարեկամ պիտի ըլլար քան իրեն, թէ այդ փառասէր զրացիին միանալով ինքն իր շահերուն պէմ գործած պիտի ըլլար, ու այսպէս զանի հրաժարեցուց Պոսնիան եւ Հերսէքը ազատելու զաղափարէն, — թէպէտ այդ երկիրներուն մէջ է որ սերպ ցեղին ամէնէն անաղարտ տարրը կը գտնուի: Աւստրիա Միլանի փառասիրութիւնը դարձուց դէպի Մակեդոնիա, ուր ցեղերը ամէնէն աւելի խառնուած են, ուր Սերպիա Պուլկարիան կը գտնէր իր դէմը, բայց կը հետեւէր այն նշանաբարերուն զորոնք Աւստրիա զետեղած է Սելանիկի ճամբուն վրայ: Բոնութիւնը և ընտրական ապականութիւնը սերպ խորհրդարանին ընդունել տուին այս քաղաքականութիւնը. բայց Սերպիա կը զգար թէ Մոնղոլներու հետ բարեկամութիւնը խղճը, Պուլկարիոյ հետ գծաուելը, Պոսնիան եւ Հերսէքը Աւստրիոյ ձգելը՝ սլաւական դատը եւ իր իսկ ապագան մատնել էր: 1890ին, Միլանի ճարտարակութիւնները ա՛լ այն աստիճան զգուցեցուցած էին երկիրը որ Օպրէնովիչներու թագը փրկելու համար, հրաժարեցաւ և երկրէն հեռացաւ: Եւ թագաւորութեան փոփոխութիւնը, ճշմարտապէս ժողովրդական հակազդեցութեամբ մը, իշխանութեան զուլիւր անցուց այն կուսակցութիւնը որ Ռուսիոյ հետ մերձեցման մը կը փափաքէր և անոր աջակցութիւնը կը վայելէր, կ'ըսէին:



Այդ միջոցին, Ռուսիա ուզածին պէս Պուլկարիա տեսչաւորուած էր, և երախտագէտ Պուլկարներուն հետ համաձայն կ'երթար: Պուլկարները իրենց իշխան ընտրեցին Պաթէմպէրկի Ալէքսանտրը, Չարին ազգականը ըլլալուն համար. Ռուսերու յանձնեցին երկրին կառավարութիւնը: Ռուսերը ամէն բան ուզած եւ ամէն բան ձեռք բերած էին.

բայց իրենց այդ ամենակարողութիւնը այնպէս գործածեցին որ դժուարին կացութեան մը մէջ գտնուեցան: Ռուսերը լաւ կը կազմակերպէին բանակը, երկրին երուսուցը կը մտնէին, եւ ժողովուրդը արհամարհելու երեւոյթ ունէին: Պուլկարները վերջ ի վերջոյ հասկցան որ իրենց ազատարարները ո՛չ թէ իբր փրկիչ կը գործէին, այլ աշխարհակալ. Պուլկարիա, թիւրքէն ձեռքէն ազատելով, ուրիշ բան ըրած չէր բայց եթէ տէրը փոխել, և նոր լուծը, որովհետեւ աւելի կազմակերպեալ էր, աւելի անդադում և աւելի ծանր կ'երեւնար: Եթէր տարի ետքը, այդ լուծը անտանելի երեւցաւ, և Ալէքսանտր իշխանը երբեք աւելի ազգային կամքի մը թարգմանը չեղաւ քան 1885ի այն օրը ուր իր ուս խորհրդականները ճամբեց: Գրեթէ անմիջապէս ետքը, Արեւելեան Բուսկիին Պուլկարիոյ միանալով, յեղափոխական շարժումով մը կը վերահաստատէր Սան-Սթէֆանոյի կատարած գործը, և Սերպիան, պուլկար իշխանապետութեան վրայ յարձակելով — այն պատուակով թէ Պուլկարիա շատ ուժեղ կը դառնար, — Պերլինի վեհաժողովին կատարած գործը վտանգելու կ'ընէր: Այս ճգնաժամին, Ռուսիա պէտք էր ցոյց տար թէ Պուլկարիոյ մէջ Պուլկարները կը նախընտրէր թէ իր անձնական տիրապետութիւնը: Իր որոշումը կտրուկ ու անողոք եղաւ: Պուլկար բանակին բոլոր բարձրագոյն սպաները Ռուս էին. պատերազմը հրատարակուելուն պէս, Ռուսիա ետ կանչեց զանոնք: Պուլկարները ըմբռնեցին թէ զիրենք այսպէս լքելը՝ պարզապէս թշնամիին մատնել էր: Ու թէպէտ պատերազմը շահեցան Սլիւեիցայի յաղթանակով, ուր տեղակալներ կը հրամայէին իրենց վաշտերուն, և հարիւրապետներ՝ իրենց զօրագուններուն, ու իրենց հպարտութիւնը դոհացաւ, բայց դառն յուսախաբուութեան մը յիշատակը պահեցին ատկից: Ռուսիա իր ամբողջ ճէնը ցոյց տուաւ — ու այսպէս Պուլկարներուն ճէնը զրգոնց — ամէն միջոցներով անկարելի դարձնելով իր հպատակներուն ալ աւելի սիրելի դարձած յաղթական իշխանին պաշտօնավարութիւնը: Բայց Պուլկարները, Աւստրիոյ խորհուրդով, Ալէքսանտրի յաջորդ ընտրեցին, հակառակ Ռուսիոյ, Գոպուրկի Ֆերտինան իշխանը:

Պուլկարները եւ Սերպերը ներհակ ճամբու մը հետեւած էին ուրեմն: Ռուս բարեկամութեան փորձառութիւնը՝ Պուլկարները Աւստրիոյ կը մօտեցնէր. Աւստրիական գործակցութեան արդիւնքները՝ Սերպերուն մէջ խանդաղատանք առաջ կը բերէին Ռուսիոյ նկատմամբ: Բայց սխալ պիտի ըլլար այս շարժումը նկատել իբր իրենց տէրերը փոխելու միայն զբազած ստորագրասեաններու յաղաղութիւն մը: Մինչդեռ երկու մեծ խաղացողները այս պղտիկ ժողովուրդները առաջ կը բռնէին ինչպէս քարեր ճատրակին վրայ, այդ կենդանի քարերը կը դատէին խաղը ուր խնդիրը իրենց ճակատագրին վրայ էր, և որովհետեւ իրենքզիրենք զոհուած նկատեցին, զիրենք անզգած նկատող ձեռքերէն խուսափեցան, եւ որոշեցին իրենք իրենց շարժիլ: Եթէ իրենքզիրենք Ռուսիոյ կամ Աւստրիոյ տիրապետութիւնը կրելու դատապարտուած նկատէին, Ռու-

սիան էր որ պիտի ընտրէին: Եթէ Ռուսիա իրենց ազատութիւնը չ'ուզեր, գոնէ սլաւ ցեղերուն միութիւնը կ'ուզէ. Աւստրիա ո՛չ իրենց ազատութիւնը կ'ուզէ, ո՛չ իրենց միութիւնը: Բայց Պուլկարներուն ինչպէս նաեւ Սերպերուն ամբողջ կորովը ուրիշ ապագայ մը կը պատրաստէ: Երկու կայսրութեանց ստրկացուցիչ գղութանքներուն ենթարկուած, տկարներուն ուժը գործածեցին, հեռաւորը օգնութեան կանչեցին՝ զիրենք մօտէն հետապնդողին դէմ, և իրարու դէմ հանեցին այդ ցանկութիւնները՝ ազատութիւնին պահելու համար: Իրենց ուզածը անկախութիւն է:

Ինչպէս ապահովել այդ անկախութիւնը:

Ազգերու իմաստութիւնը իր պարզ խօսքերուն մէջ մէկէ աւելի պատգամ կը պահէ: Դարերէ ի վեր, Պալքանեան Թերակղզիին ամբողջ տարածութեանը վրայ, իր առասպելներով՝ և իր երգերովը հռչակած է՝ խրաքանչիւր ցեղի մասնաւոր փառքէն վեր՝ եղբայրակցութիւնը բոլոր ցեղերուն զորոնք իրարու կը միացնէ հողի, ցաւի, նոյն հայրերէն փոխանցուած կամ նոյն բռնակալին դէմ թափուած արեան նոյնութիւնը: Հաւասարներու միջեւ այս գորովը կը պատրաստէ այն համաձայնութիւնը զոր նախապատուութեան հպարտութիւնը անկարելի պիտի դարձնէր: Ֆրանսական Յեղափոխութենէն ի վեր, Պետութիւններու ընդարձակ և յարասեւ փոփոխութիւնները ազգերուն արութիւն տուած են իրենց երազները խոստովանելու: Պալքաններու ազգերը իրար դրաւել չէին մտաբերեր, այլ իրարու ընկերակցիչ. ընդհանուր անյողողող կամքը այս էր՝ քաղաքական երկնքին յարափոփոխ դոյններ ցուցանող յողողող կարգադրութիւններուն մէջէն: Ատոր շնորհիւ էր որ, Դանուբէն մինչեւ Թրակիա, առանց նախանձութեան ողջունուեցաւ այն խուսափուկ յոյսը Նաբոլէոն Սլաններուն կուտար՝ Իլլիւիոյ թաղաւորութեան հաստատութեամբ: Այդ ընդհանուր անյողողող կամքն էր որ 1848ին, հակառակ սահմանազուլաններու և դաւանանքի բաժանումներուն, Սերպերը և Դարատագրիները մղեց խրուածներուն օգնելու ընդդէմ Հունգարացիներուն: Դարձեալ 1866ին, երբոր Աւստրիա քայքայուելու մօտ ուրիշ Թիւրքիա մը կը թուեր, յուսաց թէ մէկ քանի ազգեր իրենց ինչքը պիտի վերստանային այդ երկու Պետութեանց աւերակներուն մէջէն. խրուած հայրենասէրներուն, Գարատագրի իշխանին և Սերպիոյ իշխանին միջեւ այդ միջոցին կնքուած դաշինքը ատոր հետեւանքն էր: Խրուածիա և Դալմատիա՝ Աւստրիայէն ազատելով, Սերպիա՝ Պոնիան իրեն կցելով, և Մոնղէնէկրօ՝ Հէրսէքը իրեն միացնելով, դաշնակցութիւն մը պիտի կազմէին սերպ վեհապետին նախագահութեան ներքեւ: Այս վերջինին սպանութիւնը և կոմս Պայսզի զեղերով Աւստրիոյ բուժումը քանդեցին այս ծրագիրները:

Այդ ծրագիրները վերստին երեւան ելան երբոր օտար ազգեցութիւնները դարբեցան տիրապետել Սոֆիա և Պիլկրատ: Իսլամին ձեռքէն ազատած ժողովուրդները զիտակից էին թէ իրարու պէտք ունէին՝ Թիւրքիայէն խլելու

համար իրենց այն մասերը որոնք դեռ գերի էին. թէ իրենց արդէն կազմակերպուած և զանազան ցեղերու ներկայացուցիչ խմբաւորումները չէին կրնար միակ Պետութիւն մը կազմել, թէ պատերազմի ատեն բաւական ոյժ մը, խաղաղութեան ատեն ընդարձակ շուկայ մը, ամէն ատեն աշխարհի մէջ ազգեցութիւն մը ներկայացնելու պէտքը՝ իրենց վրայ պարտք կը դնէր ո՛չ թշնամի ըլլալ ո՛չ օտար: Դաշնակցութեան զազափարը տարածուեցաւ իբր անհրաժեշտ պայման միաբանութեան և իբր միակ պահապան զանազան ազգայնութեանց: Յունաստան, Ռումանիա գէպի այդ զազափարը կը մղուէին. պետական մարդերու միջեւ կարծիքներու փոխանակութիւններ ցոյց տուին այդ գործին գծաւորութիւնը ու անհրաժեշտ հարկը. սերպ, պուլկար, և մոնղէնէկրոցի վեհապետներուն միջեւ այցելութեան և խօսքերու փոխանակութիւններ ժողովուրդներուն ծանուցին ինչ որ կը պատրաստէին իրենց պետերը: Ռուսական քաղաքականութեան դէմ կը հանէին ինքնօրէն ըլլալու կամքերնին, ու աւստրիական քաղաքականութեան դէմ՝ միացեալ ըլլալու կամքերնին:

ԷԴԻԷՆ ԼԱՄԻ

4. ՊՈԼՍՈՅ  
ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Կ. Պոլսոյ և Իզմիրի Հայերը Պ. Մատթէոս Մամուրեանի գրական յորելեանը տօնելու կը պատրաստուին: Հանրաժանօթ հրապարակազրին արժանաւորութեան գընահատումը կամ քննադատութիւնը այս յօդուածին շքանակէն դուրս է: Մտքի մարդու մը մեծարանք ընծայելու գաղափարին նորութեանը մէջ պէտք է տեսնել Իզմիրի տօնահանդէսին նշանակութիւնը:

Մինչեւ հիմա մեր բարքերուն մէջ մտած չէր գրական կեանքի մը սկզբնաւորութեան թուականէն մինչեւ որոշեալ թուականի մը բոլորումը պարզեւբացաշխութեան հանդէսի մը շուքովը փառաւորել: Մենք Ֆրանսացիներուն օրինակին հետեւող ենք, ու անոնք չեն կարող մտաբերել թէ կարելի է որոշեալ օր մը տեղ մը հաւաքուիլ և պատկազարգել Վիկթոր Հիլիօ մը, Ռոման մը, յիշեցնելու համար թէ իրենց առաջին բանաստեղծութիւնը կամ քննադատութիւնը այս ինչ օրը գրած են, և թէ անկէ ի վեր սահած ժամանակամիջոցին մէջ ուրիշ շատ հրատարակութիւններ ալ ըրած են: Յոբելեանին գաղափարը մեզի Ռուսիոյ Հայերէն կուգայ. ու անոնք ալ ուսական և գերմանական աւանդութիւններէն ազդուած են: Շատ տարիներէ ի վեր է Ռուսաստանի Հայերը ժամանակ առ ժամանակ իրենց մէջէն հանրաժանօթ զրոգի մը յորելեա-

ը կը տօնեն, առանց միշտ համբերելու յիտնամեակի մը բոլորմանը, կամ մինչև իսկ քսան և հինգամեակի մը: Երբեմն քսան և հինգամեակն ալ մտքերնուն կ'ելլէ, ու օրին մէկը յանկարծ կը յիշեն թէ տաղանդի մը գրական կեանքին սկզբնաւորութեան առաջին քառորդը արդէն սահած է, ու զեռ ժամանակ ալ կայ երկրորդին լրմանը. ու ահա կունենանք միջանկեալ յորեւեանները՝ երեսնամեակը, երեսուն և հինգ ամեակը:

Գրական շողշողափայլ հանդէսներու սովորայթը մեր մէջ եթէ ընդհանրանայ, մեր մատենագրութեան զարգացմանը վրայ ո՛ր և է ազդեցութիւն պիտի չունենայ: Բարոյական կեանքով մը ապրելու անդիմադրելի պէտքն է որ անյիշատակ ժամանակներէ ի վեր հայկական գրականութիւն մը ստեղծած է և զայն անընդհատ շարունակութեամբ առաջ կը մղէ: Սահակ Պարթեւէն մինչև Օտեան, Շնորհալիէն մինչև Հայրիկ, Խորենացիէն մինչև Ալիշան, Տաթևացիէն մինչև Տէրոյենց, Նարեկացիէն մինչև Դուրեան, ու անկէ մինչև առդին հայ միտքը միշտ խորհեր է, հայ սիրտը միշտ զգացեր է, առանց ո՛ր և է քաջալերանքի, առանց ո՛ր և է յորեւեանի: Հայ մատենագրութիւնը բնութեան ստեղծագործութիւնն է. անտառին կաղնին է, լեռներուն ծաղիկը: Երջանկութիւնը, զմբաղդութիւնը, կիրքը, տարագրութիւնը, հայրենիքի մը մարած փառքը, նոր արեգակի մը ծագման հաւատքը ստեղծած են հայ գրականութիւնը: Ու ոչ յորեւեանի մը տենչանքին մտրակն է վարած, ոչ ալ զրամական պարզենքու ակնկալութիւնն է շլացուցած անոնք որ մեր ատեններն իսկ Հայաստան, Պոլիս, գաւառները զրազէտի գրիչը ձեռք առած ու ալ չեն թողած: Հայ գրագէտը մտքի ճնշումին, սրտի թելադրութեան ծնունդն է, ըլլայ՝ անիկա ուռճանալու և տեւելու նախասահմանեալ կաղնին, ըլլայ՝ անիկա առտուն բացուող իրիկունը խամրող ապրիմ-մեռնիմը:

Յորեւեանի մը օգտակարութեանը մասին այս գիտութիւնները ընելով հանդերձ կ'ըմբռնեմ Պոլիս տեսնուած նոր երեւոյթին կարեւորութիւնը: Այդ երկրին մէջ մեր վրայ տիրապետող իռլամ ժողովուրդը քսան տարիէ ի վեր օրէ օր կ'անանանայ. իր բոլոր հին գրագէտները կամ ընթացման գատապարտուած են, կամ անբարոյականացած. իսկ մտաւորականներու նոր խորունդ մը այլ ևս չի ծնիր: Երկրին թշուառութիւնը անխտիր կը մահացնէ բոլոր ցեղերը, ու կը հաշմանդամէ անոնց միտքը: Հոն տխմար, ապուշ գրաքննութիւն մը ջլատած, սպաննած է Միտքը: Ու ահա հայ միտքը ինքզինքը կը պահպանէ, աներեւակայելի ճիգերով կ'ապրի, ծնունդ կ'ունենայ, և կը շարունակուի: Մեր ցեղը ինչպէս նիւթական, նոյն և բարոյական ու մտաւորական կեանքի համար ալ հզօր տուկունութեան յատկութեամբ օժտուած է: Պոլսոյ այդ մտաւորական կեանքն է որ իր գոյութիւնը արտաքին ցոյցով մը կ'ուզէ հաստատել և հայ սրտերը ամրապնդել: Պոլսոյ մտաւորականները Մտքին համար պաշտամունք մը կը պահանջեն, հոգ չէ թէ ինչ արձանի կամ պատկե-

րի դիմագծերուն ներքէն կրնայ ներկայանալ ժողովրդին աչքերուն:

Թիւրքիոյ Հայոց մտաւորական կեանքը քսան տարիէ ի վեր հետզհետէ պարբերական մամուլին շրջանակին մէջ կը պարփակուի: Գիրք գրելով չունեցանք, մանաւանդ այս վերջին տասը տարիներս: Հայուն միտքն ու սիրտը օրագրութեան մէջ փնտոց իր թագստոցը, հոն գրաքննութեան հետ քիչ մը կենցաղափարելու հնարաւորութիւն գտնելով: Եթէ օրուան հանրային կեանքի պատերազմը օրագրութեան մէջ մղուեցաւ, ինչ որ անոր կոչումին կը համապատասխանէր, նաև օրագրութեան մէջ ցոլացաւ կեանքը իր ամէն երեւոյթներուն տակ: Հոն երեւցաւ ապուած կեանքի պայմաններէն ծնած վիշտը: Հոն ժպտուն բայց խորապէս ցասկոտ հեզութիւնը մտրակեց ինչ որ պայմանադրական է, ինչ որ կեղծիք է, ինչ որ բարոյականութեան զաւեշտը կը կոչուի: Հոն գաղափարը՝ գիտութեան և իմաստութեան նիւթովը սնած՝ ջանաց կորույթի որ ջլապինդ գորութեամբ օժտել հայութեան միտքը: Տարիներ հոն բարախեց Պոլսոյ ու Հայաստանի սիրտը: Բայց այդ բոլոր յօդուածները, որոնց մէջ վէպը, պատմութիւնը, իմաստասիրութիւնը մեծկակ տեղ մը բռնած էին, հատորի ձեւով երեւան չեկան: Ներքին գործերու գրաքննութեան թողատրած օրագրական յօդուածները իբր զիրք ալ հրատարակելու համար պէտք էր զանոնք նորէն ուրիշ պաշտօնատան մը՝ կրթական նախարարութեան՝ քննութեանը և վաւերացումին ենթարկել, որմէն անյաղութելի գժուարութիւններ կրնային ծագել, Ուստի գիրք չունեցանք: Եւ հայ միտքը առ այժմ Պոլիս կը շարունակէ հանդէսներու և օրագիրներու միջոցաւ ապրի:

Թիւրքիոյ բարոյական և նիւթական արդի աննախընթաց անկման միջոցին Կ. Պոլսոյ Հայերն ալ գրական արտագրութիւններու աննախընթաց առատութեան մը հանդիսատեսները կ'ընեն մեզի: Երեք տարիէ ի վեր է Պոլսոյ հանապազօրեայ և պարբերական հրատարակութիւնները հետզհետէ կը շատնան. երեւոյթ մը որուն նըմանը տեսնելու պատեհութիւնը չէր ներկայացած նոյն իսկ մեր ժամանակէն լաւագոյն համարուող ատեններ: Պոլիս այժմ հայերէն լեզուով չորս օրաթերթ գոյութիւն ունին՝ Արեւելք, Բիւզակեղիտ, Սոսրիսեղեկ, Մաղիկ, հայատառ և թրքաբարբառ երկու՝ Ճերիտե, Մեձմուշա. չեմ գիտեր թէ Մակգուռէն կը հրատարակուի՞ թէ ոչ: Յետոյ կուզան պարբերականները՝ Մասիս, Աւետարեք, Փռնել, Բիւրակե, Պատկեր, Լոյս, Հանրագիտակ. և իզմիրի Արեւելեան Մամուլը: Եթէ մտքով տասնըհինգ տարի ետ դառնանք ու Պոլսոյ հայերէն օրաթերթ մամուլին կացութիւնը յիշենք, դիւրութեամբ պիտի կրնանք գաղափար մը կազմել Թիւրքիոյ Հայոց հիմակուան մտաւոր պահանջումներուն ընդարձակմանը վրայ:

Պոլիս 1883ին կանոնաւորապէս մէկ օրաթերթ կը հրատարակուէր՝ Մասիսը. 1884ին հրապարակ ելաւ Արեւելքը. երկու օրաթերթ չկրցին միահաղոյն ապրիլ. Արեւելքի երեսուսուն վեց ամիս ետքը 33 տարուան Մա-

սխար, յարատեւելու անկարող, վաճառուեցաւ նոր թերթին ընկերութեանը: Արեւելք 1884 յուլիս 1էն սկսեալ թիւրքիոյ Հայոց միակ օրաթերթը մնաց մինչեւ 1891 յուլիս 13: Այդ թուականին Հայրենիք երբ իբր նոր հիմնարկութիւն մը երեւան եկաւ, մենաշնորհեալ ընկերութիւնը պարտաւորուեցաւ լուծուիլ և Արեւելքը անհատի մը աշխատութեանը յանձնել: Կառավարութիւնը 1896ին Հայրենիքը վերջնապէս խափանելով Արեւելքի գոյութիւնն ալ վերջնապէս ապահովուած կը համարուէր. բայց քանի մը ամսէն ան ալ ջնջուեցաւ, ու թիւրքիոյ Հայերը ատենի մը համար առանց օրաթերթի մնացին մինչև Բազմազգային սկզբնաւորութիւնը, որուն գրեթէ զուգահեռեցաւ Մասիսին իբր օրաթերթ վերերեւումը, փոխան նախկին Արեւելքին: Դուրը 1897ին վերահաստատեց Արեւելքի արտօնագիրը որով Մասիսի շարունակութեանը պէտք չմնաց: Եւ ահա միեւնոյն ծաւալով եւ միեւնոյն գնով երկու օրաթերթ 1897 էն ի վեր բաւական բարեյաջող վիճակի մէջ կ'ապրին Պոլիս: Ասոնց վրայ աւելցաւ Մուշեղեանի անկի սակաւագին եւ նուազ մեծագիր քան միւս երկուքը. ու հիմակ ալ Ծաղիկն է որ կուգայ ստուարացնել Պոլսոյ Հայերէն հանապազօրեայ մամուլին թիւը: Թիւրքիոյ Հայերը ուրեմն բացի երկու հայատառ-թրքաբարբառ օրաթերթէ եւ կարգ մը պարբերականներէ, կարող կ'ըլլան պահել Հայերէն չորս օրաթերթ ալ, զոնէ առ այժմ:



Կ. Պոլսոյ հայ մամուլին տասնըհինգ տարուան յառաջդիմութեան ոլոր մօտը ընթացքը պիտի կարենայ թիւրքիոյ Հայերը ուսումնասիրել ուղղորդներուն խորհրդածութեան իսկատիպ նիւթեր հայթայթել: Երկրին ընդհանուր վիճակը 1883ին օրագրական զարգացման աւելի նպաստաւոր պայմաններու մէջ կը գտնուէր քան թէ 1899 ին. եւ սակայն վերջին տասը տարիներս այդ պայմանները որքան աւելի կը վատթարանային մեր մամուլն ալ այնքան աւելի կը ճոխանար: Ակնարկ մը 1883էն 1899ի ժամանակամիջոցին վրայ այս իրողութիւնը կը հաստատէ:

Ռուսեթիւրք պատերազմը օսմանեան պետութեան մէջ բաւական զբաւ ներմուծած ըլլալով առեւտրական դոհացուցիչ կացութիւն մը կը տիրէր թէ՛ Պոլիս եւ թէ՛ գաւառները. զլիստորաբար Հայերն էին վաճառականութեան բարեյաջող վիճակէն օգտուողները, ուստի և կրնային առանց նեղուելու տարին քանի մը զահեկան ընթացանութեան յատկացնել: Մամուլը կառավարական խիստ հսկողութեան ենթարկուած չէր: Թերթերը առանց կանխարգել յրաքննութեան, ուղղակի իրենց արտօնատէրներուն պատասխանատուութեամբը ո՛ր եւ է լուր կամ յօդուած ապագրելու առաւելութիւնը կը վայելէին: Թիւրք իշխանութեան զեմ ծանր լեզուով գրուած կամ ժողովուրդը զրգոնելու բնոյթը ունեցող հրատարակութիւնները միայն լրագրի մը, հանդէսի մը առժամեայ կամ վերջնական խափանումը կ'առթէին: Ազգային ամէն հաստատութիւն,

ները եւ ինչիրները, հանրային գործերուն մասնակցող բոլոր անձնաւորութիւնները քննադատելու անսահմաւազաւ տութիւն տրուած կը հայ մամուլին: Հայաստան անունը իբր աշխարհագրական եւ պատմական ընթացիկ բացատրութիւն մը ամէն օր կը գործածուէր. Հայոց Հին ու նոր պատմութեան նիւթերը օրագրութեան էջերը առանց արգելքի կը գրուէին: Ատեն մը հայկական խնդրին վրայ ամէն տեղեկութիւն կը հաղորդուէր, իբր օրուան նորութիւնը: Յեղափոխական կոչուած լուրերու գաղափարը չէր ծնած. 1885 ին Պոլսոյ թերթերը խոշոր քառերով տպեցին Մարտէյ հիմնուած Արմէնիա թերթին հրատարակման ծանուցումը: Մշակի եւ Բաֆֆիի վրայ դրուատական յօդուածներ կը գրուէին: Ու սուլթանին ծննդեան եւ գահակալութեան տարեդարձները փառաբանելու պարտականութիւնը դեռ 1884ին Պոլսոյ մամուլին վրայ չէր ծանրացած: Ազգային ժողովը ստէպ ստէպ կը գումարուէր, օրուան ազգային հրատապ խնդիրներուն ո՛չ չափ կար, ո՛չ սահման: Ու մինչեւ 1884 միայն Մասիսը եւ անկէ մինչեւ 1898 միայն Արեւելքը իբր միակ հայերէն օրաթերթ կը տիրապետէին հրատարակին վրայ. երկու օրաթերթի միաժամանակ տեւական գոյութիւնը անիրականալի երազ մը կը նկատուէր. Մասիսի կործանումէն ետքը Հայերէն երկրորդ թերթի մը հրատարակութեան ձեռնարկները վաղանցուկ փորձեր եղան միայն:

Երբ 1891 թուականին կը հասնինք, օրագրութեան համար հեղձուցիչ մթնոլորտ մը արդէն ստեղծուած կը գտնենք: Երեք տարիէ հետէ հայ մամուլը կանխարգել զրաքննութեան ենթարկուած ըլլալով, իրաւունքները կամաց կամաց իրմէն խլուեր են. 1891 յուլիս 15 ի յեղափոխական շարժումը ընդհանուր կերպով թիւրքիոյ Հայերը կառավարական ամենամանր կասկածանքներու ենթարկած ատեն՝ միանգամայն Դրան ամենալուրջ ուշադրութիւնը հայ մամուլին վրայ դարձնել տուած էր: Հայոց ինքնուրոյն Հին կեանքի մը յիշատակը բնաջնջելու խորհուրդով արգիլուած էր պատմական ո՛ր եւ է տեղեկութեան հրատարակութիւնը. ինչ որ կրնար հայկական խնդրին իբր ակնարկութիւն մը կասկածուիլ անխնայ կը ջնջուէր: Սանձում ազատական ո՛ր և է գաղափարի: Ազգային ժողովին նիստերը այլ եւս չէին շարունակուեր. օրուան հրատապ խնդիրներ գոյութիւն չունէին, ու պատրիարքարանը հաշտ աչքով չէր պիտեր ազգային գործերու քննադատութեան համար հայ մամուլին տակաւին վայելած չափաւոր ազգեցութիւնը, որմէն Արեւելք օգտուելու յօժարութիւն ցոյց չի տալով պատրիարքարանն ալ անոր ջնջումին չէր հետամտեր: Ու ահա օրագրութեան համար այդ սարսափազգեցիկ պայմաններուն մէջ Հայրենիքը իբր ամենօրեայ թերթ կը հրատարակուի: Կը գտնուի անձնաւորութիւն մը, Շահնազար, որ կը համարձակի մեծկակ զրամազուլու մը յատկացնել այդ գործին, եւ թիւրքիոյ Հայոց բոլոր հանրածանօթ գրողները գրեթէ ամենքն ալ Հայրենիքին շուրջը հաւաքել իբր խմբագիր կամ աշխատակից: Թիւրքիոյ Հայերը ուրեմն 1878էն մինչեւ 1891 հայերէն մէկ օրա-

թերթով մնալէ յետոյ, այդ թուականին ամենօրեայ երկու լրագիր կ'ունենան: Ոչ մէկը ոչ միւսը նախկին թերթերուն հրատարակման խեղճուկ վիճակին մէջ կը գտնուէին:

Բայց այս վերջին չորս տարուան գինգակ կացութեան քով 1891-93ի ժամանակամիջոցը կրնայ բարեբաստիկ օրերու շրջան մը նկատուիլ: Օսմանեան իշխանութիւնը առանց ո եւ է ակնածանքի բացարձակօրէն կը ջանալուէ հայութիւնը ակնհերե կերպով: Հայոց համար հանրային կեանքը զոյութիւն չունի. պատրիարքարանը Դրան մէկ ժասնաճիւղը կը համարուի, կառավարական հայ պաշտօնատարներու բռնապետութեան տակ: Ու մինչ հայ ժողովուրդը բարոյական ահեղ տագնապի մը մէջ կ'այրի, միեւնոյն ատեն մատնուած է նաեւ գրամական այնպիսի տագնապի մը որուն նմանը գարեբէ ի վեր չէ յիշատակուած: Եւ ահա հայերէն օրաթերթերը ու հանգլէսները կ'աճին կ'ուճանան, հակառակ ուղիղ բանականութեան որ պէտք էր տրամաբանական կանոններով հայ մամուլին ջնջուը Հայոց բարոյական եւ նիւթական սարսափելի վիճակին անխուսափելի հետեւանքը նկատէր: Իսկ մինք երբ հայ մամուլին 1878էն 1899 յառաջդիմութեան պայմանները այսպէս աչքերնուս առջեւ կը պատկերացնենք՝ կը փորձուինք մտածելու թէ հայ մամուլին բարգաւաճման նպաստաւոր հանդամանքները ազդին գրամական անձկութեանը եւ մտքին շղթայմանը մէջ պէտք է փնտռել:

Այս կարծիքը արտառոց ենթադրութիւն մը պիտի համարուէր եթէ իրողութիւնները անոր հիմնաւորութիւնը հաստատած չըլլային: Ուստի հանդիսատեսներ ենք անսովոր երեւոյթի մը որուն ծննդեան գաղտնիքը իմանալու հետաքրքիր ըլլալու ենք:



Հայ օրագրապետները ժողովրդին նիւթական բարեյաջող վիճակէն քաջալերուած ամենաբարձր գին մը կը գնէին իրենց թերթերուն, 40 փարայ ողջ, այսինքն 20 սանթիմ. Ֆրանսայի էն սուղ թերթերը 13 սանթիմ են. ու մեծահարուստ Անգլիան էր միայն որ Հայոց ազգին հետ կրնար մրցիլ սուղ թերթի վաճառման մէջ. այն ալ միայն թայմզով որ 30 սանթիմ է: Տարին երեք ոսկի օրագրի յատկացնելու կարողութեան տէր 1,000-1,500 հայ կը գտնուէին Թիւրքիա մինչեւ 1884ի վերջերը. սակայն այդ թուականին զգալապէս նուազած էր Թիւրքիոյ բարեկեցութիւնը, ուստի և Արեւելք թէև նախկին Մասիսէն լաւագոյն խմբագրուած, բայց միայն 7-800 գնող գտած էր, ուստի եւ բաժանորդական ընկերութիւնը իր ծախքերը զոցելու անկարելիութեան դատապարտուած, պարտաւորուեցաւ թերթին գինը կէսուակէս զեղչել: Եւ ահա օրագիր գնողներու թիւը եռապատկեցաւ. 2,000-2,200 հատ քսան փարանոց Արեւելք կը վաճառուէր. թերթին գոյութիւնը փրկուած էր: Իսկ 1891ին Հայոց նիւթական կացութիւնը նուազ փայլուն էր. եթէ նոր թերթ մը քսան փարայ գինով հրատարակ ելլէր, Արեւելքի ընթերցողներէն

մաս մը կորզել պիտի յուսար առանց ստեղծելու ընթերցողներու նոր դասակարգ մը. եւ նոր թերթ մը պիտի չի կրնար այդքան թուով ապրիլ: Շահնազար թերթին գինը 10 փարայ դրաւ. և երբ 1896ին Հայրենիք ջնջուեցաւ՝ արդէն 4,500-5,000 օրինակ կը տպուէր, թիւ մը զոր հայ օրագրութեան պատմութիւնը երբեք չէր արձանագրած ո՛չ Թիւրքիա, ո՛չ Ռուսիա:

Այսպէս ուրեմն Հայոց նիւթական վիճակին աստիճանաբար տկարացումը կը հարկադրէր օրագրապետները աստիճանաբար նուազեցնել իրենց թերթերուն վաճառման գինը. ու այդ գինը որքան աւելի կը նուազէր՝ ընթերցողներու թիւն ալ այնքան աւելի կը ստուարանար: Օրագրի մը շուրջը ընթերցողներու նոր համակարգումները կը պարտաւորէին խմբագրութիւնները ընդհանրութեան միջին մտքին դիւրամատչելի թերթ հրատարակել: Անշուշտ 40 փարանոց թերթ կարգացող հայ հասարակութեան մը ամենատուար մեծամասնութիւնը մտաւորական ո՛ր եւ է գերազանցութիւն չէր վայելեր 10 փարանոց թերթ կարգացող ժողովրդին վրայ: Բայց քիչ թէ շատ հարուստ նկատուած ընթերցողները աւելի օրուան լուրերուն կարեւորութիւն կ'ընծայէին քան թէ գաղափարի և զգացումի արտայայտութեան: Մասիսէն ետքը Արեւելքի մէջ արդէն ժողովրդական գրականութեան մը ուղղութիւնը երեւան կուգայ. բայց ազնուապետական ձգտումը — բառին ծիծաղելի առմամբ — թերթին վերին վարչութեան անդամներուն մէկ մասը միտին գէմ կը հանէր, որով եւ Արեւելքի առաջին, երկրորդ, երրորդ երեսները տարբեր հոգով կը խմբագրուէին, եւ յաճախ իրարու կը հակառակէին: Նոր գրականութեան մը ասպնջարանը երրորդ էջը կ'ըլլար: Հայրենիքով Կ. Պոլսոյ հայ օրագրութեան ուղղութիւնը հիմնովին կը փոխուի: Թերթը հարուստի կամ աղքատի, գիտունի կամ ազէտի համար չի հրատարակուիր, այլ ամէնուն համար: Վաճառականը, բեռնակիրը, սեղանաւորը, հացալաճառը, զարգացածն ու անզարգացածը ամենքը պէտք է ինչ որ կարդան ակորժով կարդան, դիւրաւ հասկընան, բան մը սորվին, մտածելու մղուին, եւ սրտերնին տրոփէ: Առաջնորդող յօդուածներէն մինչեւ մանր լուրերը ամէն նիւթ գրական պարզութեամբ եւ գեղարուեստական ճաշակով գրելու հոգածութիւնը տիրապետէ թերթին խըմբագրութեան մէջ: Հայրենիքին թէ՛ Պոլիս, թէ՛ Հայաստան, թէ՛ Եւրոպա գտնուող բոլոր աշխատակիցները թերթին ըստեղծած ուղղութեանը կը հետեւէին: Մտաւորական նոր կեանքի մը զարկը տրուած էր:

Մտաւորական այդ նոր կեանքին զարգացումովն է որ հիմա Պոլիս չորս օրաթերթ եւ շատ մը պարբերականներ կրնան հրատարակուիլ և ապրիլ: Թերթերու բազմացումը եւ նուազումը եթէ հայ ժողովրդին նիւթական կացութեանը զանազան փոփոխումներէն կախում ունենար միայն, պէտք էր որ Թիւրքիոյ Հայերը հիմակ մէկ օրաթերթով մը բաւականանային, քանի որ իրենց վիճակը այժմ շատ աւելի գէշ է քան թէ 1894ին: Բայց բարոյական զօրութիւն մը կայ որ կը վարէ հայ ազգին մտաւորական կեանք:

քը, եւ որուն պահանջումները անդիմազորելի են: Մեր ամբողջ պատմական կեանքին մէջ այդ ուժին գերիշխանութեանը հպատակած ենք. ու ան է պահպանող հայ ազգութիւնը բիրտ ուժին յաղթանակներուն դէմ: Հազարաւոր տարիներէ ի վեր աղիտաբեր ամէն մէկ թուականէ անմիջապէս ետքը հայ ազգին բարոյական կեանքը նոր բարգաւաճումով մը հզօրացած է: Նիւթական բիրտ ուժէն պարտեալ ազգը իր փրկութիւնը աննիւթական նրբին ուժին մէջ փնտռած է: Սուրին եւ հուրին առջեւ ընկճուած հայութիւնը զիմանալու եւ ապրելու կարողութիւնը գերագոյն Արդարութեան մը իտէպէս խնդրած է: Հոգիի եւ մտքի կեանքով ապրած է: Երգեր է, աղօթքեր է, խօսքեր է սրբազան բանաստեղծութեան լեզուով մը: Այդ լեզուով մեր Հայերը իրար հասկցած են, իրար քաջալերած են, եւ դարէ ի դար ազգային ազատագրութեան հաւատքը անմահ պահելով մեզի աւանդած են: Հին հոգին է որ ազգաներու վերանորոգումովը նորէն կը սաւառնի ամբողջ ազգութեան վրայ ու իր հովանիին տակ զայն կը պատսպարէ, կը զօրացնէ, կը պահպանէ: Այդ ազգային հոգին երբ մամուլին մէջ ալ կը թռչի ժողովուրդը հտեւէն կը վազէ: Այդ հոգին կը տիրապետէր Հայրենիքին վրայ, ուստի եւ հայութիւնը 1891էն 96 Հայրենիքին փառեցաւ:

\* \* \*

Հիմակ 1895-97ի աղէտները, որոնք լէնկթիմուրի ու ձիւնկիզկանի անունները մոռցնել կրնան տալ, կը վերընձիւզեն ազգին բարոյական կեանքը. ու մամուլը այդ վերընձիւզման ծնունդն է: Ազգային համախմբումի մեծ կեդրոններէն հեռու ըլլալովս չեմ կարող ծանօթագրել նոր մամուլին թիւրքերոյ հայութեան վրայ ունեցած ներգործութեան աստիճանը. բայց հետեւելով օրաթերթերու եւ պարբերականներու հրատարակած յօդուածներուն, քաջալերական երեւոյթ մը կը տեսնեմ: Գրողներու ստուար մեծամասնութիւնը իրենց պարտականութեանց գիտակցութիւնը ունին: Ընդհանրապէս հանգարտ ոգի մը կը տիրէ մամուլին մէջ: Գրողները կը զգան թէ սղաւորի մը առունը շատ աղմուկ յարուցանելը անվայել է: Եւ ուժասպառ ազգը ոչ թէ բուն ջնջումի կը կարօտի այլ հանգարտ կազմուցման: Բոլոր զուգահեռները երկիւղած զուշուրութեան մը զրոշմը կը կրեն:

Հայաստանի ժամանակակից կեանքը իր բոլոր մանրամասնութիւններովը ուսումնասիրելու ակններու ձգտում կայ: Թէ՛ օրագիրներուն եւ թէ՛ պարբերականներէ ոմանց էջերը լեցուն են երկրէն թղթակցութիւններով, որոնք փոխանակ հանրային կեանքի ընթացիկ գործերուն վրայ միայն խօսելու, կը պարզեն հայ ժողովրդին կենցաղաւորութեան մանրամասնութիւններն ալ: Աւանդութիւն, լեզու, կրօնք, բարոյական եւ նիւթական կեանք ամենքն ալ Պոլսոյ մամուլին մէջ կը պարզուին: Երկիրը իր ժողովուրդովը ճանչնալու ակններու փափաք կայ: Եւ յայտնի է թէ ընթերցող հասարակութիւնը հիմակ հայրենի երկրին օրուան կեանքովը շատ կը զբաղի, ու մամուլը ժողովրդին պահանջմանը զահագում տալու կը նկրտի:

Հայաստանէն ուղղակի Պոլիս թերթերուն զրոգները հիմա բազմաթիւ են. անոնց բոլոր յօդուածները լուրջ ուսումնասիրութիւններ ընելու կը հակամիտին: Ընդհանուր ոգին սակայն զգածեալ տրտմութիւն մըն է: Կը տեսնենք նաեւ որ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ հայրենիքի զրոգները կ'աշխատին եւրոպական մտքին հետամտիլ: Կը վերլուծեն մեծ հանդէսներու զրական, իմաստասիրական յօդուածները. հայ ժողովրդին կը ծանուցանեն Եւրոպա հրատարակութիւնները: Գեղեցկասիրութեան ճաշակը զարգացնելու ակնբերել իղձ մը կայ: Եւ արդէն հասած են շատ մը երիտասարդներ որոնց անունները զեռ քանի մը տարի առաջ անծանօթ էին եւ հիմակ ուշադրութիւննիս կը գրաւեն:

Հանրային գործոն կեանքի դադարումը զուտ դրական, իմաստասիրական, գեղարուեստական բարդաւաճումին կը նպաստէ: Ո՛չ Ազգային ժողով կը գումարուի, ո՛չ պատրիարքարանի ուղղութիւնը ներքի է քննադատել. եւ օրագրողները ինքնարեւոյթ զգուշ են թաղական գործերու եւ ազգային հաստատութեանց նկատմամբ իրենց վարմունքին մէջ: Հայաստան առ այժմ առաջնորդական խնդիրներ չեն ծաղիւր, եւ հոն ալ ներքին հանգարտութեան պէտքը շատ զգալի է: Ու անոնք որ կը խորհին, կը գրեն հարկապարուած են իրենց մտքին անունը ուրիշ արտերէ փնտռել: Ռուսահպատակ Հայոց մատենագրական զարգացման պայմանները նմանօրինակ երեւոյթ մը ցոյց կուտան. ազգային հանրային կեանքի չզոյութիւնը հայ միտքը Ռուսաստան մղած է իր ուժը բանասիրութեան ներքի: Հանապազօրեայ մամուլը իսկ աւելի հանդէսի մը պարունակութեամբ կը ներկայանայ քան թէ օրագրի: Հանրային կեանքը հոն զարոցներու մէջ միայն կը կայանար, եւ յորմէ հետէ այդ հաստատութիւնները խրուեցան Հայոց ձեռքէն, օրագրութիւնը բացի թրքահպատակ Հայոց գործերէն, հանրային ուրիշ խնդիր չունի գրեթէ: Ռուսի բանասիրութիւնը օրէ օր կը զարգանայ հոն եւ հիմնական զօրութիւն ունեցող մատենագրութիւն մը ստեղծելու վրայ է: Թիւրքերոյ Հայոց միտքն ալ հիմակ բանասիրութեան մէջ կ'ուղիւորի. բայց մինչ Ռուսաստանի Հայերը կրնան հատորներ հրատարակել, նոյն իսկ զբաքննութեամբ, ազգին թիւրքերոյ Հայերուն այդ առաւելութիւնը կը պակսի, վասն զի գրաքննութիւնը կատարելապէս տիւմար ու պուշ է, երկրին կառավարական գրութեան համեմատ:

Հայաստանի եւ Պոլսոյ արդի մատուրական շարժումը ազգային ինքնաճանաչութեան եւ ինքնամփոփումի ուղղութեան մէջ կը յառաջանայ: Ու երբ կը տեսնենք թէ ազգը այդ ճամբէն առաջնորդողներէն շատերը նորածիլ երիտասարդներ են որոնք բնութեան բերմամբ շատ եռանդոտ եւ աճապարող պէտք էր ըլլային, փոխանակ շատ շրջահայեաց եւ շատ խոհեմ հանդիսանալու, կը զգանք թէ թիւրքերոյ Հայոց մտքերը հիմնական փոփոխութիւններ կրած են, եւ ասոնք մեր նկատառութեանէն չեն կրնար լրիւպել:

ԱՐՓԻՍՐ ԱՐՓԻՍՐԵԱՆ

ՄԵՆԱՒՈՐԻ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Լոստոն, 30 սեպտեմբեր 99

Սիրելի՛ Գրիգոր,

Պոլսէն ստացած թերթերէս մէկը բեզի կը խրկեմ. ուշադրութիւն դարձուր կարմիր նշանագիծ տողերուն: Կը յիշե՞ս ամիսներ առաջուան մէկ խօսակցութիւննիս: Բարիքի ընշաւէտ երկու հայ ակնափաճառներու նկատմամբ մեր հասարակութեան վարմունքը յատկանշական երեւոյթ մը կը համարէիր: «Անոնցմէ մէկը, կ'ըսէիր, իրեն դիմող հայրենակիցներուն երբեք իր աշակցութիւնը չէ զլացած. եւ իրեն դէմ թշնամութիւնը պակաս չէ: Միւրը կը զգուշտնայ ուրիշին բարիք ընելու փորձութեան մէջ իյնալ, հաւանօրէն անձնասիրտկան խոհեմ հեռատեսութեամբ. ու հասարակութիւնն ալ զինքը հանդարտ կը ձգէ:» Ու կ'աւելցնէիր՝ «Վա՛յ իրեն եթէ օր մը ինքն ալ ո՛ր եւ է հայու մը ծառայութիւն մատուցանել ուզէ:» Այդ «վայ»դ կը սկսի իրականութեան մը երեւոյթը առնել: Անտարբեր ակնավաճառը, թերեւս արեան ժառանգութեան օրէնքին զօրութեամբ, հայ ազգին օգտակար ըլլալու զաղափար մը կը յղանայ վերջերս: Կ'որոշէ քանի մը որք տղաք բերել տալով, ծախքերուն հայթայթումը իրմէն, իր գործարանին մէջ անոնց ոսկերչութիւն սորվցնել: Գաղափարին համար չեմ կրնար ըսել թէ ճիշտ է. ինքնին շա՛տ ազէլ է. ու Հայոց ուրիշ բան չէր մնար ընել բայց եթէ դո՛ւ մնալ, յարատեւութիւն մաղթել եւ օրինակին հետեւողներ յուսալ: Սակայն եթէ բոլոր Հայերը այսքան պարզ մտածութեամբ մը շատանային, քու հոգեբանական գիտութեանդ արժէքը պիտի նուազէր: Չես սխալած: Կարգա խրկած թերթս. ու սիրտդ որ դժգոհի, կրնաս, զի ըսածդ ելաւ, անձնասիրութիւնդ փայփայլուած համարիլ ու միւթարուիլ: Մինչեւ իսկ մեծ աղէտ մը նախատեսողը՝ եթէ երբեք զէպքերը իր վախերը արդարացնեն՝ զոհուանալու կուրծեան սփոփանքը կը զգայ, գուշակութիւններուն իրականացմանը մէջ իր մտաւորական ուժին ապացոյցը տեսնելով: «Ես չըսի՞» ին հպարտութիւնը պահ մը դժբաղդութեան ներկայութիւնը մոռցնել կուտայ:

Եւ որովհետեւ առիթը կը ներկայանայ բեզի պղտիկ զէպք մը հաղորդեմ, քու հոգեբանական դիտողութիւններդ վաւերացնելու համար: Ու զիտեք թէ մեծ գիտերը, գիտական զրութիւնները շատ բան պարտական են պղտիկ զէպքերու ուսումնասիրութեան: Իննսունըվեցի խուճապականներէն մաս մը շունչերնին Գահիրէ առած էին: Այս դժբաղդներէն շատերը տեղաւորելու եւ պարենաւորելու նպատակաւ կազմուած Յանձնաժողովին նախագահութիւնը ստանձնեց քաղքին մէկ երկու առաջնակարգ հայերէն մին, որուն նշանաւոր դիրքին շնորհիւ հարկաւոր զուարթին հաւաքումը դիրացաւ: Նախագահը անձնապէս միանուազ նուիրատուութեամբ մը չբաւականանալով կանոնաւոր ամսավճար մըն ալ յատկացուց: Ականաւոր համարուած միւս հայերը լաւագոյն համարեցին իրենցմէ խնդրուած զրամը խրկել, առանց զործօն դեր ստանձնելու: Յանձնաժողովին նախագահը ունայնասիրութեան զգացումէ մը մղուած չէր որ երեւան կուգար: Ըրածը զոհութիւն մըն էր: Մարդասէրները անօթի մը կերակրելու

համար նախ եւ առաջ իրենց զրամական նուիրատուութեան բարուք մատակարարութիւնը երաշխաւորող վտանգութիւն մը կը պահանջէն: Բայց ահա այդ նախագահը քիչ մը ետքը պարտաւորուեցաւ իր տունը մտնել ելլելու համար ծածուկ դռնակի մը պէտքը զգալ: Նպատատուր հախներէն ոմանք իրենց ընձեռուած օգնութենէն աւելին պահանջելու իրաւունք ունենալ կարծելով, կը պաշարէին նախագահին դուռը: Չմբան եղանակն էր. Եգիպտոսէն անցնող զարձող Եւրոպացիներէն շատերը՝ քաղաքագէտ, հարուստ, լորտ, միշտ կ'այցելէին այդ հայուն, որ շարաթը երեք չորս զիշեր իշխանական ընդունելութեամբ կը հիւրասիրէր ամէն ազգէ օտարականները: Ու եզաւ որ գաղթականներէն քաջամարտիկները պիտեորնին սլորած, սպառնական նայուածքով կը շարուէին այդ հայուն ապարանքին մեծ դրանը առջիւ, ճիշդ ու ճիշդ ընդունելութեան զիշերները: Գիւրին էր ոտտիկանական միջամտութեամբ ամենքը տարտղնել, բայց Յանձնաժողովին նախագահը ներողամիտ քաղցրութեամբ կը վարուէր մոլորեալներուն հետ: Իր գործակատարին հնարագիւտ ճարտարութիւնը և գարնան ժամանումը ամէն անպատահութիւն զարմանեցին: Բայց համը մարդուն բերանը մնաց: Իր միւս աստիճանակիցները ո՛ր եւ է նեղութիւն չկրեցին, բամբասանքի առարկայ չեղան եւ ոչ ալ թշնամանք իրենց վրայ հրաւիրեցին, վասն զի չէին ուզած իրենց անձնական հանգստութիւնը ո՛ր եւ է կերպով վրդովել:

Հանգուցեալ Խաչքա ամիրայէն աւելի ետ չերթալու համար, որ իր մէկ կարեւոր նուիրատուութեանը առթիւ ծաղրանկարի առարկայ կ'ըլլար, չեօփձի մը դիմագծերուն տակ, կոնակը մեծկակ կողով մը, մինչեւ մեր օրերը, գլխացաւէ զերծ չեն մնացած ամէն անոնք որ, գոնէ պահ մը, Բարութեան մաքրենի մթնոլորտին մէջ բարոյական կազդուրում փնտոեր են: Ու չփորձուինք տարակուսելու որ արդեօք անիրաւ է Նիշէ երբ կը կարծէ թէ եսասիրութիւնը զոհողը իր լաւագոյն բնազգէն կը զրկուի: Եւ սակայն քանի որ զրամատու բարեբարներ ըլլալու կամ չըլլալու առիթները թէ՛ բեզի եւ թէ՛ ինձի հաւատարապէս պակասած են, չենք կարող փորձառական գիտութեամբ վճռել թէ իր անվրդով հանգստութեանը մէջ կարծարսիրտ եսամոլը աւելի բարեբաստիկ է քան թէ ուրիշին օգտակար ըլլալու պատճառաւ փորձանքի հանդիպողը: Կ'երեւակայեմ թէ եսամոլին հոգին երբեք չի հրճուիր այն քաղցրանոյշ հրճուանքովը որ բարեգործութեան մը պարգեւն է: Ու սիրտը թերեւս իր բերկրութեան մեծ մասը կը պարտի բարեգործութեան ընկերացող ցաւին: Հաւանօրէն մարդկութիւնը սէրերու դերագանցին, մայրական սիրոյն, վրայ գաղափար մը պիտի չունենար եթէ զաւակը առանց մօրը սաստիկ ցաւ պատճառելու ծնէր: Ու վերջապէս գրեթէ հասարակ տեղիք դարձած ճշմարտութիւն մըն է. Ուրախութիւնը միշտ քիչ թէ շատ բան մը պարտական է վշտին: Ու էն ազնուասիրտ բարեգործն անգամ գլխացաւէ գոնէ թեթեւ իմն կը զգածուի:

Ինձի անանկ կուգայ թէ Գրիգորոս ակնբեր բարեգործութեան մը այս բոլոր անպատահութիւնները տեսնելով, զարմանը յանձնարարեց ալ ձեռքին տուածը ձախը չիմանալու փափկանկատութեան մէջ: Բարեգործութիւնը եւ եռասիրութիւնը կրնան համաձայնութեան մը յանդիլ Աւետարանը իրաւարար ընդունելով:

ՄԵՆԱՒՈՐԸ

### ԻՍԼԱՄՆԵՐՈՒՆ ՆՈՐ ԱՍՊԱՐԷՉ

Պոլսէն անգլիական թերթերուն զարնուած հեռագիր մը կը հաղորդէ թէ վերջերս դաւառական իշխանութեանց հրահանգներ խրկուած են որպէս զի իրենց բոլոր զօրութեամբ քաջալերեն իսլամները ճարտարագործական ձեռնարկութեանց: Կուսակազները պիտի ջանան ամէն դասակարգի իսլամները համոզել որպէս զի իրենց զբաժանուածները միացնելով առեւտրական ու ճարտարագործական ձեռնարկութեանց համար ընկերութիւններ կազմեն: Այս հրահանգներուն իբր հետեւանք քրիստոնեայ, մասնաւորապէս հայ եւ յոյն վաճառականները իրենց առեւտրական գործառնութեանց մէջ արգելքներու պիտի հանգիպին որպէս զի թիւրք վաճառականները օգտուին:

Ուրիշ աղբիւրներէ առնուած տեղեկութիւններն ալ այս լուրերուն ճշգրտութիւնը կը հաստատեն: Պոլսոյ կեդրոնական կառավարութեան նոր խորհուրդները ընկերաբանական յօդուածներու շարքի մը նիւթ կրնան մատակարարել, բայց առ այժմ համառօտ տեսութեամբ մը կ'անցնինք վասն զի խորհուրդները եթէ երբեք իրականանան իսկ, շատ ժամանակի պէտք կայ: Ինչպէս որ անհատ մը ինչքան ալ զբաւ ունենայ չի կրնար մէկ օրէն միւս օրը վաճառական կամ գործարանատէր դառնալ, նմանապէս եւ անհատներու խումբ մըն ալ, որ գործի մէջ տղէտ է, չի կրնար պարզապէս սուլթանական իրատէր մը վաճառականութեան, ճարտարագործութեան յաջողակ ընկերութիւն մը կազմել: Վաճառական, ճարտարագործ ըլլալու համար թէ՛ մտքի, թէ՛ մարմնի նախնական պատրաստութիւններ հարկաւոր են: Դարերէ ի վեր քեֆուլը ապրող ժողովուրդ մը յանկարծ չի կրնար առտուն մուծն ու լուսուն գործի վազել, մինչեւ գիշեր շարաշար աշխատիլ, մանաւանդ երբ ստիպողական հարկը զիրենց չի մղեր այդ զոհողութեան: Իսկ եթէ շարաշար աշխատելու տրամադիր իսկ գտնուին, պէտք է որ բան սորվին: Ուրեմն դեռ ժամանակ կայ որ իսլամները վաճառական եւ ճարտարագործ ըլլան:

Եւ սակայն մենք Հայերս պէտք է փափաքինք որ Հայաստանի իսլամները կարելի եղածին չափ կարճ ժամանակամիջոցի մէջ երկրի մը զարգացման աշխատութիւններուն ընդունակ դառնան:

Երբ երկրին քաղաքացի իսլամները վաճառականութեան ու ճարտարագործութեան հետամտին՝ այսինքն աշխատութեամբ ապրելու վարժին, թիւրքերոյ ընդհանուր վիճակը հիմնովին դէպի լաւը կը շրջի, ու Հայերը առաջինը կ'ըլլան այդ բարեփոխութենէն օգտուելու: Թիւրքերոյ թշուառութեան, վատթար վարչութեան, անբարեկարգութեան զլլատուր պատճառներէն մէկը ստուարաթիւ դասակարգի մը գործոն կեանքէ հեռացումին մէջ կը կայանայ:

Տնտեսագէտները կ'ընդունին թէ մնայուն բանակները

երկիր մը աղքատացնելու կը ծառայեն, վասն զի բազմութիւ անձեր իրենց զինուորականի պաշտօնին բերմամբ չեն մասնակցիր երկրին արդիւնաբերութեանը, այլ միայն սպառող կ'ըլլան, այսինքն ուրիշին աշխատութիւնը կ'ուտեն առանց իրենց բան մը արտադրելու: Ինչպէս աղքատ ու թշուառ չըլլայ թիւրքերն ուր անգաղար սպառող զինուորական բանակէն դուրս կայ նաեւ էֆէնտիներու բանակ մըն ալ որ ուտելու վարժուած է միայն: Քաղաքացի իսլամները քրիստոնէից արտադրութիւնը ձրիաբար կը վայելեն. երբ իրենք ալ արտադրող ըլլան, այն ատեն տնտեսական առաւելութիւնը կրկնակի պիտի ըլլայ, նախ՝ քրիստոնեաներուն պիտի մնայ իրենց աշխատութեանց արդիւնքը, երկրորդ՝ երկրին ընդհանուր հարստութիւնը պիտի աւելնայ: Հարստութեան աճումը հետը կը բերէ եւ սպառումի յաւելում: Երբ բոլոր իսլամները արտադրող ըլլան, իրապէս կը հարստանան, եւ իրենց պէտքերն ալ կը շատնան. առեւտրական կեանքի մէջ կրօնական խտրութիւնը չի կրնար գոյութիւն ունենալ, և քրիստոնեաներուն այնքան գործ կը բացուի որ թերեւս հասնելու ալ չբաւեն:

Երկրին առեւտրական ու ճարտարագործական կեանքին իսլամներուն մասնակցութեան անխուսափելի հետեւանքը կամ պայմանը պիտի ըլլայ թիւրքերոյ քաղաքական վիճակին հիմնական բարուրումը: Ան ատեն իսլամները իրենք բարձրագոյ ձայնով պիտի պահանջեն այն բարեկարգութիւնները որոնց անհաշտ թշնամիներն են այսօր: Եւ իրաւ ալ վատթար վարչութեան մը ոճրագործական մեղսակցութեամբն է որ իսլամները քրիստոնէից աշխատութիւնը յափշտակելով կրնան ապրիլ. բարեկարգութիւնը թրքական աւարառութեան մահն է, ուստի եւ թիւրքերն ալ բնական թշնամիներն են ո՛ր եւ է զրութեան որ զիրենք պիտի զրկէ անաշխատ կենցաղավարութեան մը հաճոյքներէն: Բայց երբ աշխատիլ սկսին, ան աւտեն պիտի տեսնեն թէ առանց ապահովութեան, առանց արդարապատ օրէնքներու, առանց արդարապատ դատաստաններու անհնարին է վաճառականութիւն եւ ճարտարագործութիւն ընել, ու պիտի զարմանան թէ քրիստոնեաները ինչպէս կրցեր են թէ՛ բիշ շատ ապրիլ և թէ՛ դատարկապարտ իսլամները ապրեցնել:

Շահու համերաշխութիւնը պիտի միացնէ տարբեր կրօնքներու պատկանող երկրացիները, եւ մահացու հարուածը պիտի տայ հրդեհի, թաւանի, ջարդի քաղաքակառուցութեան: Երբ շուկային մէջ Հայոց եւ թրքաց վաճառատունները քով քովի ըլլան, իրարու խառնուած, Պոլսոյ կառավարութիւնը ինչպէս պիտի կրնայ վաճառաշահ քաղաքներուն շուկաները այրելու հրամաններ խրկել պարբերաբար. ինչպէս կարելի պիտի ըլլայ թալլել, կողոպտել ժողովուրդ մը որուն հետ իսլամներն ալ առեւտրական մեծ գործեր ունին, եւ այդ աւերումէն իրենք ալ կը կործանին:

Իսլամները թիւրքերոյ կառավարութեան վրայ հզօր ազդեցութիւն ունենալով պիտի յաջողին պարտաւորել կառավարութիւնը որ տնտեսագիտական կարգ մը ճշմարտութիւնները գործնականապէս յարգէ, օրինակի համար՝

ճամբաներու շինութեան հետամուտ ըլլայ, երկրին հարըստութեան աղբիւրները օտարազգիներուն չյանձնէ, մեծաշնորհներու կործանարար դրութիւնը ջնջէ, առեւտրային շահերը պաշտպանելու տեսակէտով պատրաստութիւն դաշնագրերը, եւայլն, եւայլն:

Իսլամներուն վարիչ դասակարգերը մինչեւ հիմակ աշխատութեամբ չեն ապրած, վասն զի կը կարծեն թէ իբր աշխարհակալող ցեղ իրաւունք ունին յաղթուած ժողովուրդները իրենց սարուկը համարել, զանոնք բանեցնել, եւ անոնց քրտինքին շնորհիւ հանդիստ ապրել: Այն օրը որ աշխարհակալողները խանութէն ներս կը մտնեն քրտատոնէին քովն ի քովը, այն օրը որ գործարան կը բանան, այն օրը որ իրենց աշխատութեամբը ապրելու հարկին մէջ կը գտնուին, այլ եւս հրաժարած են իրենց բարբարոսական իրաւունքէն: Իրենց օտարամուտ աշխարհակալողները յաղթուած են իրենցմէ յաղթուող ժողովուրդէն:

Այս պարտութիւնը արդէն ակնհայտ է: Թիւրք կառավարութեան շրջանակները կը տեսնեն թէ ապագան աշխատողինն է, մտաւոր կարողութեամբ օժտուածինն է: Թիւրքիոյ բնաշրջումը կը սկսի, ու աստիճանաբար այնպիսի փոփոխութիւններու պիտի ենթարկուի երկիրը որ բոլոր ծոյլերը, տկարամիտները պիտի անհետանան, թէև պատկանին տիրապետող ցեղին, կամ անոր կրօնական դաւանութեանը: Արդէն դարձ մը ի վեր է իսլամներուն աստիճանաբար անհետացումը ակնհայտ կը տեսնուի, եւ սուլթանը կարծեց նախկին հաւասարակշռութիւնը Հայաստան վերահաստատել Հայոց շարժումն ու աղքատացումովը:

Բայց Պոլսոյ կառավարութիւնը պիտի յաջողի իսլամները քաղաքակրթութեան ճամբուն մէջ մտցնել առանորդութեամբ վաճառականութեան եւ ճարտարագործութեան, այսինքն Աշխատութեան: Այս հարցումին պատասխանը տալու համար պէտք է սպասել որ նախ այդ կառավարութիւնը ինք քիչ մը քաղաքակրթուի, ինչ որ առ այժմ յուսալի չ'երեւիր:

Ու վայրենին իր ամբողջ տգիտութեամբը երեւան կուգայ նոյն իսկ տնտեսական զարգացման պայմանները ստեղծելու պարագային մէջ: Ինչպէս կը տեսնենք Պոլսէն հաղորդուած լուրերէն, կեղրոնական իշխանութիւնը պիտի ուզէ քրիստոնեաներուն գործառնութեանց առջեւ խախտարար արգելքներ յարուցանելով իսլամներուն առջեւ յառաջդիմութեան բաց ասպարէզ թողուլ: Սուլթանին կառավարութիւնը իր խորին տգիտութեանը եւ անբարեկամ անհեռատեսութեանը աւելի ակնհայտ ապացոյց մը չէր կրնար տալ: Կ'ընդունինք թէ թիւրք կառավարութեան համար միջոցներ չեն պակսիր քրիստոնեաներուն գործունէութիւնը շլատելու. օրինակ՝ կրնայ մաքսային ամէն գիւրութիւն ընծայել իսլամ վաճառականներուն, եւ հազար տեսակ գժուարութիւններ ստեղծել քրիստոնեաներուն դէմ: Բայց քրիստոնեաները երբ աւելի նեղուին, նուազ շահին, պիտի պարտաւորուին իրենց կորուստը դարձանել աւելի միտք յոգնեցնելով, նորանոր հնարքներու

հետամտելով, ուստի և մեծ յառաջդիմութիւն պիտի ընեն: Քաղաքական կեանքի մէջ իսլամ կառավարութեան ծայրայեղ հոգածութիւնը իր ժողովրդին համար՝ մահաբեր եղաւ անոր: Իսլամը իր սուլթանին հովանաւորութեան ներքեւ վայելել միայն գիտցաւ. երբեք ուղեղը չ'յոգնեցուց, ուստի եւ իր բոլոր մտաւորական կարողութիւնները հետզհետէ տկարացան, մարզանքի կենսատու ուժէն զրկուած մնալով, ինչպէս կը տկարանայ մարմինը երբ մարդս միայն կ'ուտէ, կը խմէ, կը հանդի առանց փրկարար յոգնութիւնը կրելու: Թիւրքիոյ իսլամը վաճառականութեան, ճարտարագործութեան ասպարէզներուն մէջ, եթէ կրեք կարենայ իսկ մտնել, իր բոլոր յոյսը կառավարութեան վրայ պիտի դնէ. քրիստոնեան իր մտքին վրայ. մենամարտը պիտի մղուի մենաշնորհին եւ մրցումին միջեւ: Յաղթանակը մրցումին պիտի մնայ, վասն զի մրցողին միտքը կը զօրանայ: Տարակոյս չկայ թէ քրիստոնեան կառավարական խոչընդոտներէն առաջ եկած փեսաները դարձան կառավար, աւելի պիտի մտածէ, աւելի պիտի աշխատի քան թէ առաջ. հնարագիւտ պիտի ըլլայ, նորութիւն մը պիտի ստեղծէ:

Երկրի մը մէջ ցեղային կամ կրօնական վաճառականութիւն չի կրնար գոյութիւն ունենալ: Պոլիս հայն ալ, յոյնն ալ, հրեան ալ, եւրոպացին ալ հաւասարապէս վաճառատուններ բացած են, ամենքն ալ դործ կը տեսնեն, բայց ոչ «քին յարաբերութիւնները լսկ կրօնակիցներուն հետ է: Գնողին աչքը խանութպանին կրօնքին վրայ չի յարուստ, այլ ապրանքին վրայ: Լաւագոյն ապրանքը, գնումի ընծայուած գիւրութիւնները կ'աւելցնեն վաճառատան մը յաճախորդները: Ինչ որ իրողութիւն է Պոլիս, իրողութիւն պիտի ըլլայ նաեւ նահանգները: Այո՛, թող թիւրք իշխանութիւնը յորդորէ իսլամները որպէս զի աշխատին, գործ ստեղծեն, իրենց ճակտին քրտինքովը ապրին և հարստանան. եթէ մեր ձայնը հասնէր իրենց ականջը, նոյն յորդորը մենք ալ պիտի կարգայինք անոնց. բայց երբե՛ք ո՛ր է կրօնքի առեւտրական, ճարտարագործական մենաշնորհ:

### ԿԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Կ. Պոլսէն առնուած վերջին լուրերուն համեմատ Օրմանեան պատրիարք կը շարունակէ իր տունը քաշուած մնալ, բայց նաեւ կէս-պատրիարքութիւն կ'ընէ: Պատրիարքարանի պաշտօնեաները իր բնակարանը կ'ընդունի եւ ընթացիկ գործերու կարգադրութեան հրահանգները անկէ կուտայ: Իր տունը կը դիմեն կրօնական եւ Քաղաքական ժողովներու անդամները խորհրդակցելու:

Պատրիարքին հրաժարականը որքան որ ալ կէսուակէս է բայց եւ այնպէս անոր կարեւորութիւնը թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ արտասահմանի Հայոց համար ակնհայտ է:

Պաշտօնավարութեանը թուականէն ի վեր առաջին անգամն է որ Օրմանեան պատրիարք իր կէս հրաժարականովը քաղաքական հեռատեսութեան դրաւական մը կուտայ ազդին: Վաղորդայնը սակայն դուշակել կարելի չէ: Թերեւս պատրիարքը յարատեւ էր ընթացած ճամբէն. դուցէ յանկարծական յետադարձով մը ազգը ապշեցնէ: Թիւրքիոյ Հայոց պաշտօնական բարձրագոյն ներկայացուցչին ուղղամտութիւնը տակաւին երաշխաւորեալ չէ: Հայոց պատրիարքը բանիմաց, նրբամիտ եկեղեցականի համբար վայելելով հանդերձ միանգամայն ծանր կասկածներ իր վրայ հրաւիրած է: Անձնական նկատումներու եւ ազգային շահերու ընդդիմադրութեան պարագային հանրային օգուտը անհատականին դո՛ւրստ վախը կը տիրէ միշտ: Ուստի եթէ կրնանք յուսալ որ պատրիարքը իր կոչումին մեծութիւնը ըմբռնելով կը շարունակէ բողոքարկու քաղաքականութիւնը, կրնանք նաեւ վախնալ թէ նորէն խոնարհաբար Երլարքի նախասենեակները դեղերելէ յետոյ Գում-Գարու կը վերադառնայ, ահեղ ապագայի մը պատասխանատուութիւնը ստանձնելով:

\* \* \*

Տատեան Արթին փաշա եւս սթափած է: Պալատը խորհուրդ տուեր է ընդունիլ Օրմանեանին հրաժարականը, եւ ատեն մը Պատրիարքարանը Երեցեան Գէորգ եպիսկոպոսին տեղապահութեամբը կառավարել: Սակայն սուլթանը մերժելով այս խորհուրդը Յանձնաժողով մը նշանակեր է Հայոց «փափաքները» քննելու նպատակաւ: Այդ մարմինը կը կազմեն Տատեան Արթին փաշա, արտաքին գործերու նախկին նախարար Թիւրքիան փաշա, եւ ներքին գործերու այժմեան խորհրդական Ռէֆիգ պէյ: Յանձնաժողովը սկսած է գումարուիլ, 11-23ին: Տատեան Արթին փաշայի քաղաքական նոր ծրագրին գաղտնիքը տակաւին անծանօթ կը մնայ. ուրեմն կը սպասենք, մտքերնիս կասկածներով միշտ պաշարուած:

Ազգային գործերուն պիտակցութեամբն է թէ մասնաւոր դիտումով մը որ վարչապետը Գէորգ եպիսկոպոսը ի հարկին պատրիարքական տեղապահութեան ընտրելի կը ներկայացնէ: Այդ երիտասարդ եպիսկոպոսը լրջախոհ եւ պարկեշտ եկեղեցականի համբար կը վայելէ, ու անարժան մը չէ պաշտօնին որուն զինքը հրաւիրելու տրամադիր կ'երբելի Տատեան, բայց Երուսաղէմի միաբան է ուստի եւ Պոլսոյ պատրիարքարանին մէջ իր պաշտօնավարութիւնը կամ ազգին ընդհանրական շահերուն պիտի վնասէ կամ Երուսաղէմի շահերուն:

Տարակոյս չկայ թէ Տատեանի պատրիարքական ընտրելին Գէորգ եպիսկոպոսն է: Հայոց պատրիարքը շատ անգամ Դրան ընդդիմանալու հարկին մէջ կը գտնուի. Երուսաղէմի եպիսկոպոս մը որ Պոլսոյ պատրիարք է ինքզինքը կաշկանգուած պիտի զգայ երբ կորովալիք քաղաքականութեան մը հետեւելու հարկը ներկայանայ. վասն զի Դուրը անդին Երուսաղէմը կը սղմէ: Դառն փորձը Յա-

րութիւն պատրիարքի օրովը տեսանք: Ամէն ատեն որ քիչ շատ գլուխը տնկեց անմիջապէս Երուսաղէմի շահերը վնասուեցան: Գէորգ եպիսկոպոս կամ ուրիշ ո՛ր եւ է երուսաղէմական պիտի պարտաւորուի Պոլիս կամ Հայաստանը զոհել կամ Երուսաղէմը: Հայրենիքի եւ կրօնական այդ մեծ հաստատութեան շահերը միմեանց հակառակելու հարկին մէջ պէտք չէ դնել: Սկզբունքով պարտաւոր ենք ընդդիմանալ ո՛ր եւ է Երուսաղէմականի Պոլսոյ պատրիարք ընտրուելու խորհրդին:

Պատրիարքական նոր ընտրութեան մը պարագային յուսանք որ Թիւրքիոյ Հայոց բարձրագոյն ղեկավարչի պաշտօնին կը կոչուի Հայաստանի արդի վիճակը շատ մօտէն ճանչցող եկեղեցական մը: Վերջին երեսուն տարուան մէջ Կ. Պոլսոյ Հայոց վեց պատրիարքներէն երեքը Հայաստանը տեսնողներ եղած են, երեքը ոչ: Խորիմեան Հայրիկ Հայաստանէն կուգար ու երկիրը սքանչելապէս կը ճանչնար. ինքն էր որ հայկական բարեկարգութեանց խնդիրը ստեղծեց: Հայրիկին յաջորդող Ներսէս պատրիարքը Հայաստան պաշտօն չէր վարած. Նիկիոմիդիոյ գրեթէ անուանական առաջնորդը եղած էր: Յարութիւն պատրիարքը իր բազմամեայ պաշտօնավարութեամբը թրքական վարչութեան եւ թրքական բարքերու հիմնական տգիտութիւնը ստացած էր. ո՛չ Խորէն Ալըզեան, ո՛չ Մատթէոս Իզմիրլեան պատրիարքները տեսած էին Հայաստանը. Օրմանեան պատրիարք իբր Էրզրումի առաջնորդ եւ Վանի քննիչ բաւական տեղեակ է Հայաստանի կացութեան: Եւ ուշագրաւ է որ հինգ պատրիարքներէն երկուքը որ Հայաստանը բնաւ չէին ճանչցած, Ներսէս եւ Իզմիրլեան պատրիարքները, անոնք չափազանց ժողովրդական եղան: Այդ երկուքը հայկական բարեկարգութեանց խնդրին սկզբունքը պաշտպանեցին: Բայց արդի պարագաներուն մէջ Կ. Պոլսոյ աթոռին վրայ պէտք է եկեղեցական մը որ օրուան Հայաստանը աչքովը տեսած ըլլայ. թրքական վատթար վարչութեան բոլոր մանրամասնութիւններուն քաջ տեղեակ մէկը, որովհետեւ գիտութեամբ խօսելու պէտքը անխուսափելի է:

Ու վերջին չորս տարիներուն Հայաստանը պէտք է տեսած ըլլայ: Հիմա շատ փոխուած են Հայ եւ Թիւրք ժողոտուրդներուն փոխադարձ յարաբերութեանց պայմանները. կառավարական վարչութիւնը հայ ժողովուրդը բնաջինջ ընելու այլ ակնարկու ծրագրով կազմակերպուած է, եւ իւրաքանչիւր իսլամ պաշտօնեայ իրեն սահմանուած գահճի պարտականութիւնը կը կատարէ: Պատրիարքը այդ ամէնը պէտք է գիտնայ. ու դժուար է ընդունիլ թէ արդի զարհուրելի վիճակը իր աչքերովը տեսած հայ եկեղեցական մը կարող ըլլայ թոյլ, անձնդիր, հաճոյակատար քաղաքականութեան մը հետեւելու:

ԼՈՒՐԵՐ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԴԷՄ ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆ. Երջուրդի պայտոր խոտվայոյց վիճակի մատնուած է: «Իշխմա» ներ կը ձերբակալուէին, կ'արձակուէին, կրկին կը ձերբա- կալուէին. շահագոյն ընտանիքներու պատկանող երիտա- սարդներ առնէ օր բանտերը կը յեցուէին: Կատարուած հարցաքննութիւններէն յայտնուէր է թէ սուրբանիսն դիմ դաշտարոտքիւն մը պատրաստուած է, պարագոյնս ունե- նալով եգիպտական իշխան մը: «Թայլոց» Պոլսոյ բրդ- րակիցը որ այս կարեւոր շտաբը հաղորդած էր, կը պնդէ ստուգութեանը մասին:

ԱԿԱՄԱՅ ԽԵՆԴԵՐԸ. Սուրբանը Երիտասարդ Թիւր- քերը անարեկելոյն նոր գիշտ մը ըրած է: Չերբակալեալ- ները կեդրոնական ոստիկանատունը բժիշկներու խոր- հոշորի մը քննութեանը կ'ենթարկուէին: Խորհուրդը կը հաստատէ թէ ասոնք մտաւորական խանգարում ունին, հետեւաբար դարմանի կը կարօտին. ոչստի եւ անմիջա- պէս հիշանդանոց մը կը խրկուէին: Անգլիական բերքերու ին- ինստիտուտի թէ այս նորացեալ բարբարոտութիւնը մեծ յոշոյն կը պատճառէ իսլամական շրջանակներուն:

ԵՆԻՆԻ ԻՆՔՆԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ. Հաղորդեցիւր թէ Եւսէնի ապստամբութեան նպատակները շարժում մը կը տեսնուէին իսլամական աշխարհին մէջ. կ'երեւի թէ այս իրողութիւնը ծանր տպաւորութիւն ըրած է Երջուրդի պա- շտին վրայ, որով Արաբիոյ վարչական գործիչներ փո- յելոյն անհրաժեշտ պէտք կը տեսնուէին: Գոնէ այս եզրա- կացութեան կրնանք յանգիլ Պոլսէն անգլիական մամուլին հաղորդած հետեւեալ տեղեկութիւններէն: «Արաբիոյ ապագայ կառավարութեան ինկիւրը վերջերս սուրբանը շատ զբաղեցուցած է: Պաշտին խորհրդակցութեանց ար- դիւնքը եղած է Եւսէնի եգիպտականին նման փոխարքա- յոյնութիւն մը կամ խոտիւնութիւն մը հաստատել: Եւսէնի շրջանակը երեք նահանգի բաժնետէր, կառավարչութիւնը պիտի յանձնուէ սուրբանին կատարեալ վստահութիւնը վայելող Հիւսէնի փաշայի: Կառավարիչը իրաւունք պի- տի ունենայ ինքն ընտրել իր պաշտօնակները, բնակա- նաբար Բ. Դրան վաշերացեալները: Եւսէնի զինուորա- կան հրամանատարը կոչուակալին իշխանութեանը տակ պիտի դրուէ: Բանակին համար նոր յատակագծի մը գործադրութեանը, Արաբ ցեղերը զինուորագրութեան եւթարկուելով, վարսուէնէն հարիւր հեծեալազանց պի- տի կազմուէին, ըստ Համիտիէներու օրինակին, ասոնց բարձրաստիճան սպաները Թիւրքեր ըլլալու պայմանաւ: Երջանակին տուրքերը նոր դրութեանը մը պիտի գան- ձուէին. տարին 6,000,000 օսմանեան ոսկի հասոյցի մը գոյացումը կը յոշուցուէ: Պաշտին արաբական կոչակ- ցութիւնը, առաջնորդութեանը Ապտիւլ Հիւսայի, միա- ձայն է պարտաւորել Ապտիւլ Համիտը այս փոփոխու- րիւնը ընելու: Ամբողջ Համիտական կոչակցութիւնը հաշուած է այս ծրագրին, որուն գործադրութեան հետե-

անքները արքուն հսկողութեան պիտի պարտաւորեն ա- րեւելեան խնդրին մէջ շահ ունեցող տիրութիւնները:»

ԵՆԻՆԻ ԻՆՔՆԱՎՈՐՈՒԹԻՒՆ. Անգլիական բերքերը Եւրոպական Թիւրքիոյ կացութիւնը շատ գեշ կը նկարա- գրեն: Մակեդոնիա շատ անպահով վիճակի մէջ է, թեւ յեղափոխական ընդարձակ շարժումը մը վտանգը հիմա անցած է: Արաբիայիցիները կը շարունակեն թրիստոնեա- ները մեղել. թրիստոնեայ գանազան ցեղերուն միմեանց դիմ ունեցած նախանձեղ բազմաթիւ միջադեպեր կը ծնին: Սերեզ եւ Միլիթի իրենց շրջաններովը անարեկելայ են. Պոլսի արաբական խոտիւնները այդ կողմերէն քանի մը յոյ- ներ առեւանգելով, անոնց ազատութեանը համար փրկանք կը պահանջեն: Ազգակները Պոլսի արեւելեան շէն դպիւր, ոչսկից կը յայտնուէին թէ քաղաքական նպատակի կը ծա- սային. որ է յոյները Էկզարքիին իրաւաստութեանը են- քարկել: Եւսէնային, որ Եպիրոսի գլխաւոր քաղաքն է, հասած լուրերը շատ տխուր կը նկարագրեն երկրին վի- ճակը: Անկարգութիւնները, ուստի զինուորները յաճա- խադեպ են. յոյն եւ հրեայ հասարակութիւնները սարսա- փի եւթարկուած: Քաղքին աշխարհացի զինուորներուն պետը որ սուրբանին հրամանաւ պաշտօնակն եղած էր, հիմա նորին պաշտօնին մէջ վերահաստատուէր է. ոչ այս ծանր կացութեան պատճառը ինքն է: Եւսէնայի երեւելի- ները սուրբանին հեռագիր մը ուղղելով խնդրած են որ զիրենք ազատ տեղական իշխանութեանց շարագործու- րիւններէն:

ՊԱՅԹՈՒՄ ՄԸ. Թեւեւ քիչ մը հիւնցած հրապարակ կ'երկէ այս լուրը, բայց գաղտնապահութիւնը իսկ կը մեծ- ցրեն անոր կարեւորութիւնը: Սուրբանին գահակալութեան տարեդարձին առթիւ Մովսիսի նախարար Հասան փաշա- յի բնակարանին առջեւ ունէր մը պայքելով մարդ մը սպաննուէր ոչ 17 հոգի ալ ծանրապէս վիրաւորուէր են, շրջակայ տուներն ալ ծանրապէս վնասուելով: Ըստ հե- սագրի մը, յանցաւորները թեւ հրախաղութիւնը կատա- րել տուող ծովային զինուորներուն մէջէն են, բայց եւ այնպէս բազմաթիւ հայեր ձերբակալուէր են այս շարա- գործութեանց առթիւ:

ՀԱՍՅԷ ՈՒ ԲԱԾՆԵՐԻՆ

ՆՈՐ ԿԵՆՆԻՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկիւն ղրկել տո

L. FRANK,  
32, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵՆՆԻՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 Ին Եւ 1 Տիւն: Բաժնեկիւնն է Եւրոպայի Համար տարեկան 10 Եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի Համար տարեկան 2 Եւ վեցամսեայ 1 տոլար: